




Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ԱՌԳԵՅԻՆ • ԲԵՆԵԹԻՐԵԿԱՆ • ԳՐԵԳԻՏԵԿԱՆ
ԵՒ ՔԼԴԱԼՔԵԿԱՆ



ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ
ՇՐՋԱՆ ՄԻԼՄԵԼՅ



ՅԵՐՈՒՍԱԼԻՄ

Ի ՏԳԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

1871



ՎԵՅԵՐՈՐԴ ՏՄԻԻ
ԹԻԻ 10.

Ա. Մ Ս Ա. Գ Ի Ր

ՀՈԿՏԵՄԲԵՐ 31.
1871.

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն., Բ. Ա. Ն. Ա. Ս. Ի. Ր. Ա. Կ. Ա. Ն. Ե. Ի. Գ. Ր. Ա. Գ. Ի. Տ. Ա. Կ. Ա. Ն.

Կ Ա Ր Գ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Ա Ռ Ո Ղ Ջ Ո Ւ Թ Ե Ա Ն (*)

ԳԼՈՒԽ Է.

Նշում.

Նշումն ապրտ է լինիլ այնպէս
կանոնաւոր, որպէս կերակուր ի սը
նունդ կենաց և կրթութեան ի սահ
պանել զառողջութիւնն: Կարի փոքր
ննջին տկարացուցանէ զքիզս, սպառէ
զղօրութի ժարմնոյ և պատճառէ հի
ւանդութիւն: Իսկ կարի շատ ննջին
թուլացուցանէ զմիտս, ստուարացու
ցանէ զմարմինն, պատճառէ զկաթ
ուած, զթմբաղաւութիւն կամ զսպ
շութիւն և զայլ սոյնպիսի տկարու

թիւնս. վասն որոյ հարկաւոր է յոյժ
նշանակել ատո զօգտաւէտ միջոցն,
որով հնարէ խտրանել զյայտոսիկ ախտ
սըն. բայց և չէ գիւրին հաստատելոցն
ի սովորութիւն ինչ չըջիլ առ ոյլ:

Մանկունք պահանջեն առաւել
ննջել քան զչափահասան, և աշխատու
սէրք քան զծոյս և զգտտարկակեացս:
Բայց ճիշտ որքանութիւն քնոյ ոչ է
հնար ու մէք չափել ժամանակաւ, զի
ոմն առաւել զուարթանայ ննջելով ի
հինգ կամ ի վեց ժամս, քան զայլ ոմն
յու թ կամ ի տասն ժամս:

Մանկանց սպրտ է թոյլ տալ ի ննջել
որչափ և կամիցին. բայց չափահաս
անձանց ի վեց կամ ի յեւթն ժամս
ննջին լիսպէս բաւական է: Եւ մի որ
ննջեսցէ առաւել քան զուր ժամս:

(*) Հարուսակութիւն, տես թիւ 9:

Օ՛ր նորա՝ որք մնան առաւել քան զուժ ժամն յանկողնի՝ հնար է նուցա ՚ի նիրհել, բայց ոչ իսկապէս ՚ի ննջել. զի այսպիսեաց քունն հասարակապէս բառնի յառաջին մասին գիշերոյ տատանմամբ և պէսպէս երազօր, և անկանին ՚ի նինջ ընդ առաւօտն և մնան յանկողնի մինչեւ ցըկէս օր :

Ի՛արեգոյն եղանակ ունեւոյ զառողջ և զուարթարար քունն է յառնել ՚ի քնոյ յառաւօտու նախ քան ՚ի ծագել արեգական, զի սովորութիւն մնալոյ յանկողնի մինչ ցինն կամ ցըտասն ժամն, թուրացուցանէ զթանձրագոյն մասն մարմնոյ և նուազէ ըզկազմուածն :

Ի՛նութիւնն հաստատեալ է զգիշերն պատշաճ եղանակ ննջելոյ վասն դիւրութեան և հանգստեան անձին, բայց ոչինչ այնչափ առաւել աւերէ զկազմուած մարդոյ, որչափ արթուն մնալն ՚ի գիշերի. և ցաւալի է յոյժ, զի այս փնասակար կիրառութիւն գըրեթէ լեալ է հասարակաց սովորութիւն, որք զգիշերն ցերեկ առնեն, և զցերեկն՝ գիշեր :

Թէ՛ որպէս կարօտութիւն հանգըտանալոյ ՚ի պատեհ ժամու թարշամէ զզուարթ և զպայծառ դէմն և աւերէ զգեղեցիկ կազմուածս, կարէ որ յայտնապէս նշմարել զայս ՚ի նոսա՝ որք փոխանակեն զգիշերն ՚ի տիւ. և այս փնասակար սովորութիւն հասարակ է այնոցիկ որք զբաղեալ են ՚ի մարմնաւոր բաղձանս :

Առ ՚ի վայելել զկաղդուրիչ և հանգիստ քուն՝ հարկ է հետեւիլ յետագայ կարգադրութեանս, նախ՝ առնուլ զբաւական կրթութիւն ՚ի բաց օդի : Լըրկորդ՝ ՚ի բաց կալ յըմպելոյ զթէյղիսահուէ և զայլ զօրաւոր ըմպելիս ՚ի ժամ երեկոյեան : Լըրկորդ՝

՚ի յընթրիս առնուլ յոյժ սակաւ և թեթեւամարտ կերակուրս, և զայն նախ քան զերեկոյանալն՝ Լը չորրորդ՝ ՚ի յընկողմանիլն պահել զմիտս խաղաղ առանց տանջելոյ զայն պէսպէս սընոսի անցեալ և ապագայ անողջամիտ տատամսութեամբ :

Լարի առաւել կրթութիւնն արգելու զնինջ ընդ երեկոս, և սակաւն ոչ բերէ զհանգիստ նինջ : Հալիւ երբեք լի ՚ի գործունեայ աշխատութիւն տրտնջել զանքնութենէ կամ զանհանգստութենէ գիշերոյ : Լը այս տրտունջ լի միշտ յայնցանէ, որք ննջեն ՚ի փափկափետուր յանկողնիս և զօրն ողջոյն մնան ՚ի վերայ հանգստարար աթոռոյ, չտանելով երբեք փոյթ մարմնակրթութեան :

Ե՛ծագոյն մասն բերկրալի վայելչութեան կենաց մերոյ կայանայ ՚ի հանգստութեան գիշերոյ և ՚ի կրթութեան, ՚ի շարժման և ՚ի գործունեայ զբաղմունս աւուրն. բայց որք զանց առնեն զվերջնովքն, չկարեն բնաւ վայելել զառաջինն :

Աշխատասէրք միայն զգան զճճմարիտ ճաշակ վայելչութեան պարզ և անխառն կերակրոյ, և առողջ և հանգիստ քնոյ, բայց հարց այնոցիկ, որք միշտ գտանին ՚ի բաղմամտորակ սեղանս և ննջեն ՚ի փափուկ յանկողնիս՝ մնալով առանց իրիք կրթութեան, անկասկած լուիցես զտրտունջ անհանգիստ քնոյ, գլխացաւութեան, անմարսութեան, թուլութեան մարմնոյ, և նուազութեան անգամայ, և այլն :

Արպէս քանիցս ասացաւ զթեթեւ ընթրեաց, որ բերէ զառողջ քուն, այլ որք անցանեն քան զշալին, չկարեն բնաւ հանգիստ ննջել. զի յորժամ մտանեն ՚ի քուն, լի և բեռնաւորեալ գորով ստամբքսոցն, անդադար նեղին զարհուրելի երազօր և պէսպէս երե-

ւութիւն, որով և հատանի քունն Վա-
սին որոյ հարկ է առնուել միշտ զԹե-
թե և գիւրամարս կերակուր ի յընթ-
րիս, և յամել մինչեւ ցմարսումն, ա-
պա երթալ յանկողին, ուր անկասկած
վայելեացէ զհանգիստ քուն, և յարու-
ցեալ ի քնոյ՝ գտցէ նորոգեալ զզո-
րութիւն անձին, և անցուցցէ զօր իւր
ուրախ և զուարթ :

Ոչինչ այնպէս խափանէ զինն մեր,
որպէս անձկութիւն որտի և տարտա-
մութիւն մտաց, քանզի յորժամ ան-
անգորր է միտքն, անհնար է վայելել
զառողջ և զհանգիստ քուն :

Այս գերազայն պարգև բարեբաս-
տութեանն՝ քունն, զոր Ախատես-
չութիւնն շնորհեալ է մարդոյ ի նո-
րոգութիւն լքեալ զօրութեան մար-
մնոյ, և ի հանգիստ մտաց ի պէսպէս
հոգոյ, և ի միջոց գիւրեւոյ զողէտս
թշուառութեանց, անկասկած երջան-
կութիւն իմն է զոր մարդո վայելէ .
վասն որոյ հարկ է ամենեցուն գուն
գործել որչափ և հնար է՝ մտանել յան-
կողին խաղաղ և անգորր մտօք, որով
և կարիցէ վայելել զայս բարեբաս-
տութիւն :

Որպէս առաջին մասն աւուր յոյժ
որատշաճ և բարեգոյն ժամանակն է
գործելոյ կամ առնելոյ ինչ առաւել
գիւրութեամբ, այսպէս և քուն ա-
ռաջին մասին գիշերոյ է յոյժ կազդու-
րիչ և նորոգող զօրութեան մարմնոյ,
և որ ի մանկութենէ հաստատի ի
սոյն սովորութիւն, վայելեցցէ միշտ
զառողջ կեանս :

Այս փութով երթայ յանկողին,
փութով եւս յարիցէ ի քնոյ, և ան-
շուշտ վայելեցցէ զփարար օգ առա-
ւօտեան, զորոյ օգուտն արդէն գը-
րեալ եմք :

Փութով յառնեն ի քնոյ՝ է յայտ-
նի նշանակ փութով երթալոյ յանկո-

ղին և ի հանգիստ ննջելոյ, և որ ու-
նի զայս սովորութիւն, ցուցանի գո-
պարկեշտ, բարեկարգ և կանոնաւոր
կեցող, ընդ նմին և ազատ ի բազմա-
պիսի անմտութեանց աւերիչ առող-
ջութեան և բարոյական կենաց, քանզի
որք սովորեալ են կանուխ երթալ յան-
կողին, ի հարկէ հաղիւ երբէք խառ-
նին ընդ ընկերացն Վագոսի կամ դե-
գերին յայլ ինչ յանպատշաճ խաղս,
ի զբօսանս և ի չարաչար մարմնական
հեշտութիւնս : Այս այսպիսիք միայն
ծանկոյցն զարժանաւորութիւն բա-
րեխառնութեան և չափաւոր կեցու-
թեան : Այս այսպիսիք միայն գիտեն,
զի անշարժութիւն և խաղաղութիւն
կենաց՝ են առողջ քնաբերք, և առողջ
քունն է կաղդուրիչ և նորոգիչ ի ծանր
վատակոց նախնեմաց աւուր լքեալ
զօրութեան մարմնոյ, կարողացուցիչ
մկանանց և ջղացն և զուարթացուցիչ
վհատեալ մտացն, և գիտեն եւս, զի
յորժամ յարիցեն ի քնոյ, վայելել ս-
նիցին զզովարար օգ առաւօտեան, և
ուրախ սրտիւ և անձանձիր հոգեով
մատչիցին ի գարծ և ի պաշտօն ա-
ւուրն : Այս է իսկ ոսկեղէն կանոն ժա-
ռանգելոյ զառողջութիւն և զերկար
կեանս :

ԳԼՈՒԽ Ը .

Օգիւնոյն :

Պարտ է զգեստուց լինիլ յարմար
կլիմային . բայց սովորութիւնն ունի
մեծ ներգործութիւն ի վերայ սոյն
ինգրոյ :

Ահնար է գիտել զճիշտ յարմա-
րութիւն զգեստուց՝ զորս մեք զգե-
նումք, և զտեղւոյն՝ յորս մեք բնա-
կիմք . բայց ի նմին ժամանակի հարկ

է մեզ տալ զսպառնաճ գիտողութիւն ազատութեան աշխարհի, բազմութեան ժողովրդոց և կարօտութեան անկարող վիճակի, և զհետ երթալ յարմարութեան: Ի հասակի պատանեկութեան, յորում ջերմ է արիւնն և ազատ քրտունքն, չէ պարտ ծածկել զմարմինն բազմութեամբ զգեստուց. բայց ՚ի հասակի ծերութեան ՚ի նուազիլ մարմնոյն, ՚ի կարծրանալ մարմնոյն և ՚ի սառիլ արեան և հիւթոյ՝ պարտ է առաւելլել զզգեստան. քանզի բազում հիւանդութիւնք յառաջ գան ՚ի պակասութենէ քրտանց և հարկ է արգելլել զայս վնաս պատշաճապէս յաւելլով զզգեստան:

Նոյնպէս և հարկ է զգեստուց լինիլ յարմար եղանակի տարւոյ. քանզի հնար է զգեստու իմիք լինիլ ըստ բաւականին ջերմ վասն ամարան, այլ անբաւական վասն ձմեռան, որով և մեծ զգուշութիւն պիտի ՚ի փոխել զգեստս իւրաքանչիւր եղանակի:

Չէ պարտ մեզ կարի փութով ՚ի բաց դնել զզգեստ ձմեռան, և ոչ ընդերկար մնալ ՚ի զգեստս ամարան. քանզի են տեղիք, յորս ձմեռն հասանէ կարի փութով և յոյժ սաստիկ, առ որ պարտ է զգուշանալ զչիփխել զգեստսըն միանգամայն՝ այլ աստիճանաւ, և այս յաւէտ պատշաճի ծերոց և նրւազ անձանց:

Պարտ է զգուշանալ և գիշերոյն զգեստուց, զի իցէ այն համեմատ ցերեկեան զգեստուց. քանզի որք սովոր են զգենուլ զասուիս ՚ի ցերեկի, չէ պարտ ՚ի գիշերի փոխել զայն ՚ի կտաւեղէն, եթէ ոչ ունիցի զգեցեալ կից ընդ մորթոյն զֆլանէլ կամ զփորա կապանս արարեալ ՚ի ֆլանէլայ:

Նոյն պարտ է զգուշանալ ՚ի փոփոխմանէ եղանակի աւուրց, որք երբեմն յառաւօտու և յերեկոյն սառն

են և ՚ի ցերեկի կտրի ջերմ և սաստիկ հողմայոյ, ուր յառաւօտ և յերեկոյ ունիլ սրտո է զփորք ինչ ջերմարար հանդերձս և ՚ի ցերեկի նուրբ և օդամուտ, և պատրաստ կալ միշտ ընդդէմ հողմոյն. զի այսպիսի եղանակ կարէ պատճառել յանդադրատից զհարբուղիս, զհոգ, զկոկորդացաւ և երբեմն եւս զսրտայ:

Ի ազումանգամ զգեստք իսկ պատճառեն զմեծ վնաս չգիտողաց, արարեալ զայն յաւէտ ՚ի պարծանս և ՚ի անափառութիւն. և գրեթէ իւրաքանչիւր որ չէ ազատ յայոց վնասակար ակտից, ունելլով զսաստիկ հակամիտումն ծիսի, նորաձեւութեան և այլ լակերպութեան տարազու, որ օր քան զօր զոեղի առնու յազգս և յազինս, բնաւ անպիտան գոլով առողջութեան, կլիմայի, և յարմարութեան կազմուածոյ, հասակի և վիճակի:

Ի ազումք գրեթէ զբոլանդակ ժամանակ իւրեանց ծախեն հանդէպ հաշիւով ջանալով գեղեցիկս յօրինել զկերպարան իւրեանց նախատելի սրբութեանք, որք յաշս պարկեշտից ճիւղադք և եթ երեւին:

Ներկբայ ամենայն այսպիսի ձեռնարկութիւն վնասակար է առողջութեան յոյժ. քանզի հաւանական է, զի որք ջանան գեղեցիկս յօրինել բլակերպարան իւրեանց, զգենուլ զկարի նեղ զգեստս, և սրչափ հնար է սեղմեն զստամոքս և զաղիւս, փակելով զայնս ՚ի կարի անձուկ շրջանակս. և այս սովորութիւն խափանէ զգործողութիւն ստամոքսաց և աղեաց. զարժողութիւն սրտի և թոքին և բլագործողութիւն ամենայն երակաց. յորոց յառաջ գայ անմարսութիւն, նուաղումն, հազ, թոքացաւութիւն բազլումն սրտի, և այլն, որք յաւէտ գիպին կանանց, յորոց և բազմաց

պատճառէ ամբողջութիւն, իսկ 'ի կարգաւս
և 'ի պարս 'ի մէջ բազմախումբ մարդ-
կան՝ նուազումն և երբեմն եւս մահ:
Եւ ոչ սակաւ վնասէ ոտից և նեղ կօշի-
կըն, զի ոմանք կամելով փոքրկացուցա-
նել զուտն, աղանէն զնեղ և կարի սեղ
միջ կօշիկս սրով ճնշեալ ոտիցն բա-
զումք կարոնան և գրեթէ 'ի տասնէ
ինն վնասնան 'իկոշտէ գոյացեալ յոտս,
որ պատճառի իսկ 'ի նեղ կօշկաց. և
այս ոչ միայն նեղէ, այլ և բազում
անգամ արդելու աղատ քայլել զոր
եթէ կտրել կամիցի որ, մի իցէ այն
սրով, այլ մկրատիւ և կարի զգուշու-
թեամբ:

Պարտ է ամենայն զգուշութեամբ
'ի բաց կալ 'ի սնդոդական կապանաց
զգեստուց, որպէս ընծանոցք, գօ-
տիք, կոճակք, ճարմանդք, աղխք և այլն,
զի մի կարի պինդ քարշեցին, մինչ
սեղմեցի տեղի կապանացն. քանզի
արդելու այս զսզատ շրջանն արեան
նոյն անդեաց և խափանի զուգահա-
ւասար սնունդ և աճումն, սրով պատ-
ճառին պէսպէս հիւանդութիւնք:

'Եյնպէս և պինդ կապանք պարտ
նոցի, այսինքն փողպատ, թաշկինակ
և այլն, են կարի վտանգաւոր, զի
արդելուն զաղատ ընթացս արեան ու-
ղեղան, սրով և պատճառի սաստիկ
գլխացաւ, կաթուած և այլ վտան-
գաւոր հիւանդութիւն:

Բարեգոյնն 'ի զգեստուց է միայն
լինիլ համեստ և մաքուր, և ոչինչ է
այնչափ ծաղրալի, որչափ որ առնէ
զինքն գերի գեղեցիկ և նորածեւ ըզ-
գեստուց. ուր բազումք այնպէս հաս-
տատեալ կալ 'ի սմին՝ որպէս անշարժ ար-
ձան, որք և զցայգ և զցերեկ պատաղին
'ի յօրինուածս զգեստուց, թողլով իս-
պառ զպահանջելի գործս տան 'ի խը-
նամս ծառայից: Տարազ ամենավայե-
լուչ զգեստուց պարտ է լինիլ յարմար

կրկնային, եղանակի տարւոյ, հաստ-
կի, բարեխառնութեան և կողմու-
թեան մարդոյ:

Կորովն արք կարեն առաւել գիւ-
րեաւ տանիլ ցրտոյ և ջերմութեան,
քան փափկասունք և նուազ անձինք.
վանսորոյ չէ պարտ ճիշտ մոտադրու-
թեամբ որոշել զքանակութիւն զգես-
տուց յարմար իւրաքանչիւր անձին.
զի տմենայն որ կարէ բարւոք դատել
թէ զոր քանակութիւն զգեստուց
հարկաւոր է ծածկել զմարմինն, ջերմ
պահել, կամ յարմարել կողմութեան
մարմնոյ իւրոյ:

ԳԼՈՒԽ Թ.

Լիբարեխառնութիւն:

Լրդի հեղինակ մի քաջ դիտելով
ղբարեխառնութենէ՝ ասէ, « Բարե-
խառնութիւնն և կրթութիւնն են
երկու երեւելի բժիշկք յաշխարհի: »

Բայց արժան էր նմա յաւելուլ և
'ի սոյն թէ, այսօրիկ եթէ ըստ արժան-
ւոյն 'ի կիր առնուին, ոչ եւս պիտոյ
անայր մարդոյ այլ բժիշկ: Լրդարեւ
արժան է զբարեխառնութիւն համա-
րել իսկ և իսկ մայր և խնամող առող-
ջութեան: Բայց աւանդ, զի բազումք
'ի մարդկանէ կարծելով թէ հիւան-
դութիւնք և մահ յոյժ յամր են 'ի գը-
նացս իւրեանց, և կամելով փութա-
ցուցանել զժամանումն նոցին, վա-
րին անբարեխառն և զեղիս կեցու-
թեամբ:

Վտանգ անբարեխառնութեան չէ
անյայտ աշխարհի, զի ամենայն որ գի-
տէ, թէ կարծութիւն մարդկային
կենաց յառաջ եկն յանբարեխառնու-
թենէ:

Լռողջութիւն մարդոյ կախի 'ի

բառերստեղծ կացութենէ թանձրագոյն մասին մարմնոյ և ի հեղու կաց . քանզի որ ինչ յարմարէ զայնս ըստ պատշաճի կատարման կենսական գործողութեան , և պահէ ի կանոնաւոր կարգի , միշտ առողջ կացուցանէ ըզմարդ ի բարւոյք գրութեան . բայց որ ինչ խափանէ զայս բարեկարգութիւն խառնուածոյ , անկասկած ապականէ զառողջութիւն մեր : Աստի չիք տարակոյս , զի անբարեխառնութիւնն խառնակէ և անկարգ առնէ զբովանդակ կենսական զօրութի մարմնոյ , որով և վնասի մարսողութիւն մեր , անկարանան ջիւղք , անկանոնաւորին կղկղանք և յաւելլուածք մարմնոյ , ասպականին արիւն և հիւլք , յորոյ և պատճառին պէսպէս աստք , հիւանդութիւնք և ցաւք :

() Երկնակ առեալ մեզ ի տնկոց և յանասնոց , կարի քաջ իմանամք զվրտանգ անբարեխառնութեան , զի խոնաւութիւն և աղբ են աճեցուցիչ տնկոց . և կեր և կրթութիւն զօրացուցիչ անասնոց . բայց չափազանց քանակութիւն իւրաքանչիւրոց վնասէ նոցա . վասն որոյ որ ինչ և իցէ , որչափ և բարի և անվնաս իցէ , յորժամ ի կիր առնուցու չափազանց , անկասկած վնասէ :

Արդն է գերագոյն արարածն ի մանալեօք ճոխացեալ , զի կարող լիցի կանոնել զիւր արիւրժակ և զկիրս , որպէս զի ի բաց կացցէ ի չափազանցութենէ , և այս միայն ցուցանէ ըզմարդ գոլ պատուականագոյն քան զամենայն արարածս . բայց այնքիկ որք գերի են անկարգ արիւրժակաց և ընկճեալ ընդ անբան կրիւք , միանգամայն զրկեալ են ի գերագոյն շնորհաց մարդկային բնութեան : Օ ի հեղինակն բնութեան շնորհազարդեաց ըզմարդս արիւրժակօք և կրիւք , զի միտին

պահեցուք զկեանս անհատականս կերակրովք , և միւսովն պահեցուք ըզտեսակս զաւակօք :

Անբարեխառնն չարաչար վարէ զարիւրժակս և զկիրս իւր , այլ բարեխառն գառ առնէ ի մէջ մարմնոյ և հոգւոյ , գտեալ մէջ՝ յորում ոչ մարմնոյ պահտին կենսական զօրութիւնք , և ոչ հոգին պակասի ի բանաւոր գործութեանց :

Արդ ոչ շատանայ գոհ առնել զինքն ընդ հրաւեր պարզ և անարուեստ հանդերձանաց բնութե պատրաստեալ անդ ի ստեղծման իւրոյ , այլ ինքն ստեղծանէ զնոր արուեստական պիտոյս , և միշտ զհետ լինի ի գիւտ այնպիսի իրաց , որով հնար իցէ առաւել հեշտալի առնել զանբան կիրս իւր և յաւելլուլ զսէր արիւրժակի . բայց յերեւակայութենէ հնարեալ առարկայք ցանկութեան ոչ տան երբէք զճշմարիտ բերկրութիւն , այլ ածեն ի վերայ զցաւս :

Բնութիւնն սակաւութ շատանայ , բայց զեղխութիւնն բնաւ ոչ գիտէ ոչ զչափ և ոչ զոահման : Օ ի մարմնաւ պաշտք , արբեցողք , զեղխք և շուտոտողք ոչ գիտեն զորս վայելեն , որչափ վայելեն և որպէս վայելեն , և հազիւ երբէք ի բաց կան յիւրեանց անառակ վարուց , իբրեւ սպառն ինչք և ըստացուածք , և աւերի կազմութիւն մարմնոյ , ապա զգան զսխալանս իւրեանց , բայց աւանդ , կարի անագան :

Ահար է նշանակել աստ զհաստատուն կանոն կերակրոց , որ իցէ պատշաճ վասն զանազան կազմուածոց մարդկան , սակայն կարի տգէտ որք հաւաստեալ գիտէ որոշել զչափաւորութիւնն յանչափութենէ , և ամենայն մարդ կարող է ընտրել զչափաւորն և ի բաց կալ յանչափութէ . և գլխաւոր կանոն առողջ կերակրոց է

առնուլ զայնս չափաւորութեամբ և ողջմտութեամբ : Ինու թիւնն յաւէտ բերկրի և կազդուրի անխառն եւ պարզ սննդեամբ . բայց այո՞ւմ հետեւին միայն անբան կենդանիք , որք ճշդութեամբ պահեն զօրէնս ՚ի բընութենէ սահմանեալ ՚ի վերայ նոցա . բայց մարդն ոչ երբէք , զի նա ոչ ճանաչելով զյարգ և զարժանիս բանականութեան և ազատ կամաց իւրոց , վարէ զայնս անբարեխառն կենօք , ըստ որուկս առնելով զինքն անբան կրից . վասնորոյ նա յուեգոյն քան զամենայն անասունս , լայնէ զիսկորդ իւր առաւել սիրելով զհամ քան զնոռնդ , և միշտ հետադօտէ և ՚ի յոյզ և ՚ի խնդիր լինի հեռաւոր և մօտաւոր նորա . նոր իրաց ՚ի յղփումն զեղխութեանց , և ՚ի կործանումն անձին :

(Շարունակութիւնն)



Ս Ո Ւ Ր Ր Տ Ե Ղ Ե Ա Յ Խ Ն Դ Ի Ր Ը

(Շարունակութիւն . տես թիւ 9 .)

Երկրորդոսն առբե Յակոբայ խնդրոյն :

Արդէն անցեալ տարի սուրբ Յակոբայ վանքը Լատինաց գաղ զօրինաւորապէս արգիլուած էր և այս տարի ալ խանէի Գալիֆ , այսինքն սուրբ Փրոկչայ վանքն ալ Պենտէկոստէին օրը դաւլենին արգիլուելէ զինի կը կարծուէր որ Պրանչիսկեանք ալ այսքան եղած անցած խօսքերը տարածայնութիւնները , նա մանաւանդ մեր Սրբազան Պատրիարքին վերջնական կերպիւ իւրենց ըրած բացասութիւնները նաև Ի . Գունէն եկած հրամանը՝ որ կ'ըսէր

Թէ Հայոց Պատրիարքը շատ մի նեղէք , յիշելով , կամ լաւ եւս է ըստ Տաճկաց առակին . « Իսպէնէն եկրէ կիլ » ալ ելիմ . Իսպէնէնէն եկրէ կիլիպ եկրէնի Կար ելիմ : Եւ այս պատուական առածէն դոնէ իրենց ըրածներուն անտեղի ըլլալուն համադրելով՝ Թէ քանի որ տանուտէրը իւր սեպհական տանը մէջ հիւր ընդունիլ չուղերկրկարծիքն որ կը դադրին իրենց այս անտեղի և անիրաւ սոփալմներէն :

Իայց և այնպէս Հայոց այս մտածութիւնը՝ որ ամենաօրինաւոր էր , ինչպէս որ կը մտածուէր՝ այնպէս չեղաւ . վասն զի երբ Լատինաց սուրբ Յակոբայ տօնին օրը մօտիկցաւ , դարձեալ շուկները շատնալ ոկսան Լատինաց կողմանէ . և Հայոց Սրբազան Պատրիարքին բոլորովին հանդարտ և անկասկած կեցած միջոցին , ահա սուրբ քաղաքիս Սեմ . Սուրբապարտութիւն Պէյէն գիր մը ստացաւ ՚ի 4 Յուլիսի 1871 , որով դարձեալ կը յորդորէր և կը ջանար համոզել ըզ Սրբազան Պատրիարքը . և ոչ այսչափ միայն , այլ և պակաս չէր նոյն գրոյն մէջ ահ և երկիւղ պատճառելու կը տարներ , որով զՍ . Սրբաղնութիւնը վախցնելով կը ջանար Լատինաց կամաց կատարումը դիւրացնել , և կ'ըստիպէր միանգամայն որ սուանց ժամանակ կորսնցընելու փութով սրտասխանէ վերջնական կերպիւ՝ ինչ որ պիտի ըսէ , վասն զի « Եւս քանիցս անգամ է , կ'ըսէր , կը յորդորեմ՝ կը թախանձեմ և կը խոտառանամ ձեզ որ ձեր բոլոր կորսուած իրաւունքներուն համար Ի . Գունը կը գրեմ՝ և կը ջանամ որայն իրաւունքները դարձեալ ետ դարձուն ձեզ , նաև Լատինաց սաստիկ պատուէր կուտամ որ ձեր եկեղեցին եկած օրերնին սովորականէն դուրս երբէք բան չընեն , սովորականէն դուրս

արարողութիւններ հնարելով ձեզ
ձանձրութիւն չտան, և ձեր սեպհա-
կանութեան իրաւանց դպչելու բա-
ներէն զգուշանան, և այլն: Իսկ այս-
տու ամենայնիւ զձեզ չկարողացայ հա-
մոզել, և ձեր այս անհամոզելի մնալը
երթալով երթալով Տէրութեան կա-
մայք զէմ գործ կը համարուի. եթէ
դուք դարձեալ անհամոզելի մնաք,
գուցէ ասկէց աւելի խիստ խօսելու
պիտի պարտաւորուիմ ձեր հետ. ու-
րեմն դուք ձեզէն լաւ մտածեցէք, և
բատ այնմ պատասխան տուէք ինձ.
Ընչ որ պիտի ըսէք վերջապէս:»

Երբ այս անակնուշակ և միան-
գամայն սաստիկ գրութիւնն ընդու-
նեց Սրբազան Պատրիարքն, պահ մի
ափշեցաւ մնաց, և հետեւեալ օրը ան-
ձամբ Սուլթանարուք Պէյին քով
երթալով, հետն ունելով վերոյիշեալ
նամակին պատասխանն, զինի սովորա-
կան տետակցութեան ըսաւ ի. «Սու-
սեմութեան, «Սուլթանարուք Պէյ,
յերեկեան օր Ձեր Սեմութեան կող-
մէն զրկուած հրամանը Հայոց ազգին
ընդհանրութեան սեպհականութեան
իրաւանց զէմ ըլլալէ զատ՝ սաստիկ և
խիստ սարսափական ալ էր միանգամայն.
Սթէթ ի. Գուռը իւր հարողատ հը-
պատակին սեպհականութեան արդար
իրաւունքը օտարաց ոտքին տակ տա-
լով անոր ունեցած սեպհական իրա-
ւունքները ճանաչել չուզեր. այս քա-
նիցս անգամ եղաւ որ խնդիրներ
կուտամք. կը բողբեմք, կու ըսնք, կ'ող-
բամք ազգովին և Քրանչիակեան կրօ-
նաւորներուն մեզ տուած վնասները
ճշմարտապէս և բանաւոր փաստերով
յառաջ կը բերեմք մի առ մի թուելով
և կը հաստատեմք մեր արդար իրա-
ւունքն ըլլալը, զորս բոլոր աշխարհ
գիտէ թէ անիրաւաբար յափշտակած
են մեզմէ. եթէ այս ըսածներուս չէք

հաւատար, Սեմ. Տէր, դուք ձեզէն
կարող էք քիչ ատենի մէջ անձամբ
տեսնել, քննել և իմանալ թէ ո՞ր առ-
տիճան արգարութեան դէմ է այդ
յափշտակութիւններն. և նոյն խի ի-
րաւունքներն են զորս Սեմ. Տէր,
դուք ձեզէն կրուէք քանիցս անգամ թէ,
եթէ թող տաք լատինաց ձեր սուրբ
Յակովբայ եկեղեցւոյ մէջ պատարա-
գել, այն ձեր կորսուած բոլոր իրա-
ւունքները ի. Գուռը գրելով կ'աշ-
խատիմ եւ գարծնելու ձեզ:

«Եւ այն խոստմունքը զոր այսօր Ձեր
Սեմութիւնը կը խոստանայ, Հայոց
Պատրիարքին համար նոր չէ. վասն զի
միևնոյն խոստմունքը միևնոյն ձեւով
ի. Գուռէն ի Ս. Պօլս Մարտին Սար-
չութեան քանի մի անգամ առաջար-
կուեցաւ և անկից ալ ինձ իմացուցած
է ին և ես իսկոյն հերքեցի, զոր արդէն
Սարչութիւնն ալ հերքած էր, բայց
այսօր վերստին նոյն սնտուի յոյժ գար-
ձեալ նոր ի նորոյ մեզ կ'առաջարկուի,
իրեւ թէ երբէք յիշուած չէ: Եւ ա-
ւելի զարմանալին այն է որ ի. Գու-
ռը փոխանակ այդքան ատեն իւր սի-
րելի և հաւատարիմ հպատակին կոր-
սուած իրաւունքները ժամ յառաջ յա-
նիրաւ յափշտակին ճիրաններէն թա-
փելով իւր հարողատ տիրոջը Հայոց
Պատրիարքին յանձնել սկսելու տեղ,
Հայոց Պատրիարքը յորդորել, ստի-
պել և երկեցուցանել կրօնի, որ
նոր կորուստներ ընէ անիկայ և թոյ-
լաորէ լատինաց որ դան շարունակեն
իրենց արարողութիւնն կատարել, ու-
րով Հայոց իրենց սեպհական եկեղեց-
ւոյն մէջ Հայոց կրօնը, ազգութիւնը նա-
խատուի, հայհոյի, և անոնց սեպհա-
կանութեան իրաւունքները ի հիմանէ
տապալի. կարծես թէ մինչեւ ցարդ
եղածները քիչ եկած են: Ս'ով ողբալի
վիճակ. կը ներէ՞ օրէնքը որ Հայոց

Պատրիարքը փոխանակ հին կորուսած իրաւունքները ձեռք բերելու՝ նոր ի նորոյ իրաւունքներ կորսնցնէ. փոխանակ նոր ի նորոյ իրաւունքներ կորսնցնելու Հայոց Պատրիարքը ինքը կորսուի աւելի լաւ չքըւոր. այս, բայց ասով ալ խնդիրը չլերջանար. վասն զի իւր յաջորդին ալ պարտաւորութիւնը մի և նոյն է, գուցէ առաւել եւս :

« Չեմ հասկնար, Վսեմ, Տէր, ի՞նչ կը նշանակէ թէ՛ Ռ. Վրան և թէ Չեր Վսեմութեան յորդորմունքը Վատինաց թոյլատրելու մասին, այսու հետև Վատինաց թոյլատրութիւն ընելը, Վատինաց արտօնութիւն տալ է. նա մանաւանդ Հայոց ընդհանրութեան սեպհական եղած վանուցս մէջ մասնակից՝ այսինքն միշտ ընել ըսել է, աւելի պարզ խօսելու համար, Հայոց Պատրիարքը իւր ձեռքը իւր սիրելի ազգին աչքը հանել ըսել է. և Վատինաց ձեռքը սուր տալով հրամայել է՝ որ նախ Հայոց Պատրիարքին դուրսը կորեն և ապա ըստ կարգին. քանի որ Հայոց միամտաբար իբրեւ շնորհք ժամանակին ըրած թոյլատրութենէն այսքան ազատալի հետևանքներ հանել կարողացան Պրանչիսկեանք, այն ատեն վանքը բոլորովին Վատինաց յանձնելով դուրս ելելու պիտի պարտաւորիմք, միթէ՛ Ռ. Վուռը այսպէս ըլլալուն կը փափաքէ, զոր Տէր միտարացէ և քաւ լիցի :

« Ռ. Վուռը զմեզ կը յորդորէ կըտօնալէ որ նախ մենք զիջում ընենք և թոյլատրենք առանց արգարութեան և առանց իրաւանց՝ որ Վատինք գան մեր սեպհական եկեղեցւոյն մէջ պատարագելու, և զմեզ սնտոյ յոյսերով փայտացել կը ջանայ, այսինքն թէ՛ Վատինք այսու հետև օրինաւորապէս պիտի շարժին եղեր, աւելի բաներ չը պիտի քնեն եղեր, և մեր իրաւունքնե-

րը չպիտի յափշտակեն եղեր և 1856 թուականէն սկսեալ մինչև ցարդ կորսուած իրաւունքնիս տեղը պիտի գայ եղեր, և կարծես թէ 1856 էն առաջ Հայոց կորսուած իրաւունքները ազգային իրաւունքներ չեն, և կարծես թէ նոյն հին իրաւունքները ևս իւր սիրելի հարազատ հպատակին ետ դարձնելու Ռ. Վուռը պարտաւորութիւն չունի, ոյր վասն այդ մասին չէզոք մնալ պարտաւորեալ է. դարմանալի գործ :

« Չեր Վսեմութիւնը զմեզ նախ յորդորեցիք, և երբ նայեցաք որ Հայոց Պատրիարքը իւր ազգային իրաւանց կորստեան համազուեցաւ, իսկոյն խիստ պահանջումի փոխեցիք ձեր յորդորը, և զայն այն ատօնի՞ն խտաւ ցուցիք՝ որ կարծես թէ Պրանչիսկեանք ի ընէ անտի Հայոց հետ սոյն եկեղեցւոյ հիմը ձգած, անոր շինութեան ծախսերուն կէսը իրենք տուած. և նոյն վանուց համար մինչև ցարդ ազգովն քաշուած անտանելի նեղութեանց և տոռատարանաց մասնակից եղած, Հայոց միտքանութեան և ընդհանուր Վագին հետ նոյն վանուց ազատութեան համար թէ՛ պարտուց թէ՛ արտաքին և թէ՛ ներքին թշնամեաց դէմ միասին աշխատած, արեան քրտինք թափած, նախատուած, չարչարուած, ի դան և ի բանդ մտած. թեւեռնին կոտորած, տէքերնին ելած, ի մահ մատնուած են. և այսու ամենայնիւ այսօր ալ նոյն վանուց մէջ զալու պտտարագելու սեպհական իրաւունք ունեցածի պէս թոյլատրել կը ստիպէք Հայոց Պատրիարքը. որ ամենաանկարելի է : Այս ուր թողումք այսքան դարերէ ի վեր (սմանեան Ռարեխնամ Այստեբաց տուած հրովարտակներն, իմ իշաղներն, արտօնագրերն, որոնց մէջ երբէք Վատինաց անուն

չկայ . և ասոր որ օրէնքը կը ներէ և որ սիրտ կարէ գիմանալ :

«Միթէ Ռ. Պուռը 1856 թուէն զկնի Հայոց կորսուած իրաւունքները ետ դարձնելու խօսք տալովը ինքն վը կայած չըլար որ ինքը գիտէ եղեր իւր սիրելի հպատակ Հայոց ազգին կորսուած իրաւունքներ ունենալը . եթէ Ռ. Պուռը տեղեակ չըլար և չգիտնար , այնքան ցաւ չէր մեզ , այլ երբ գիտէ և դարձեալ Հայոց Պատրիարքը կը ստիպէ որ լատինաց լեզու տրէ , չեմ հասկընար թէ ի՞նչ բան է : Եթէ ըսեմք Ռ. Պուռը իւր սիրելի հպատակին ունեցած պարտաւորութիւնն չգիտեր , քան լիցի . եթէ ըսեմք գիտէ , ուրեմն Հայոց այսքան ատենէ ՚ի վեր կորսուած այնչափ իրաւունքներուն վրայ ինչո՞ւ չհսկեր , ինչո՞ւ յափշտակին ձեռքէն առնելով իրեն սեպհական սիրողը չդարձներ : Բանի որ Հայք զկնի ամենակորոզին Մատթեոս (Սմանեան Բարեխընամ Տէրութենէ զատ ուրիշ տէր չունին , անոր յանձնուած են այն երկնաւոր արարչէն , ուրեմն որ աստիճան պարտաւոր է այսօր իւր գթօտ աչքը իւր սիրելի հպատակին կորսուած ու կորսուելիք սեպհական իրաւանց վրայ դարձնելու իւր բոլոր ազգեցութիւնները ՚ի դօրձ գնելով զայն ազատելու այսպէս սաստիկ մը . տատանջութենէ և յափշտակութիւններէ : Ըլ դուք ձեզին դատեցէք նա և այսօր իմ սրտիս սաստիկ յուզմանէն կրած տագնապներս որք զիս այն աստիճան կը նեղեն , որով այս եռանդուն խօսքերը արտասանելու կրտիւպում և գուցէ պէտք եղածէն ալ աւելի խօսելով Ձեր Վսեմութեան գլուխը ցաւցուցած կ'ըլամ , ոյր վասըն Ձեր Վսեմութենէ ներում կը խնդրեմ այնպիսի վշտացեալ սրտիւ

մը , որ այսօր իւր Բարեխնամ Տէրութենէ իւր կորսուած և կորսուելու մօտ սեպհական իրաւանց պաշտպանութիւն խնդրած միջոցին մեծամեծ արգելքներ և ՚ի զուր ստիպումներ կ'երէ իւր առջեւ :

«Միթէ աւելի դարմանալի և դիտելու արժանաւոր կէտ չ'այսօր Ռ. Պրան մեզ համար բրած առաջարկութեան սա կտորը , այսինքն ՚ի բնէ անտի Հայոց ընդհանուր Մզգին վերաբերեալ անկախ և ազատ սեպհականութեան մէջ օտար ազգեցութեան տակ օտար ազգաց պատարագելու թոյլտրութիւնը իւր սիրելի և հաւատարիմ հպատակէն նախ գրաւ կը պահանջէ , որ եթէ խոստանայ և տայ Հայոց Պատրիարքն նոյն գրաւը , Ռ. Պուռն ալ Հայոց կորսուած իրաւունքները ետ պիտի դարձնել տայ , ապա թէ ոչ

«Մի վանտանելի ցաւոյս , կորսուած արդար իրաւունքները փոխանակ արդարութեան սուրը միայն շողացնելով ամենագիւրդին կերպիւ ետ դարձնելու , այսօր Ռ. Պուռը Հայոց Պատրիարքէն գրաւ կը պահանջէ , գրաւ մը որ Հայոց ընդհանուր Մզգին արեամբը գնուած և շաղախուած է . գրաւ մը որ (Սմանեան Բարեխնամ բոլոր կայսերաց ձեռնագրոյմ հրովարտակներով ազատ և անկախ Հայոց ընդհանուր Մզգին արդար սեպհականութիւնն է : Ընկալէս գրաւ մը որ այսօր սուրբ երկրին մէջ Հայոց ազգին ընդհանրութիւն կը ներկայացընէ . և Հայոց համար անգին և չնաշխարհիկ գանձ մը եղած է միշտ և է յաւիտեան

«Ուրեմն Վսեմ. Տէր , Հայոց Պատրիարքը այսպէս արդար սեպհականութեան մէջ ամենայն պարագայիւք այսօր յայտնեալ իւր սեպհական իրաւ

ւանց թշնամի Պրանչեոկեաններուն
 ինչպէս կրնայ թողաւորել, այսպէս ար-
 դար սեպհականութեան անհաւա-
 տարմութիւն ինչպէս կրնայ ընել, իւր
 ձեռքը իւր և իւր սիրելի ազգին աչքը
 Հայոց Պատրիարքը ինչպէս կրնայ փո-
 րել, այս տուր և առը ուրիշ բան մը
 չէ, եթէ ոչ ի խաղճը զերկրորդն՝ ըզ-
 նախկինն զանգիւտն զանգինն և ըզ-
 շնաշխարհիին կորուսանել է :

«Վ՛ր անգիւտ կորստեանս, որոյ հա-
 բեւանցի յիշատակն անգամ ընդհա-
 նուր Հայոց Վգգին սիրտը ի խոր խռ-
 ցեալ թունդ կը հանէ : Սրբեմն որ
 անգութ սիրտը պիտի ըլլայ որ անոնց
 թողաւորելու համոզուի, որ յաւի-
 տեան խցանելի ականջ պիտի ըլլայ,
 որ զայս սիրով լսէ : որ կուրանալիք
 աչք պիտի ըլլայ, որ այն թողաւորու-
 թիւնն տեսնելու ցանկայ, որ չորա-
 նալիք ձեռք պիտի ըլլայ, որ այդ ա-
 նիրաւ թողաւորութե՛ն պայմանը գրէ,
 վերջապէս որ անմիտ, անզգամ, ան-
 խիղճ և անօրէն անձը պիտի ըլլայ, որ
 այսպէս վնասակար ինդրոյն համոզուի՝
 ընդունի, թողաւորէ աւ տեսնայ, լսու-
 է այնպիսոյն կենդանւոյն ի դժոխս
 իջնալ, կամ երկայն իշոյ կախեալ ըզ-
 պարանոցէ և անկանիլ ի ծով, քան
 ընդհանուր ազգի մը սիրտը յաւի-
 տեանս յաւիտենից անբուժելի վիրօք
 և արեամբ լեցնել :

«Վ՛ր սեմափայլ Տէր, ներեցէք, թէ
 և խօսքերս վերջացնել կ'ուզեմ, բայց
 և այնպէս քանի կը տեսնամ իմ ազ-
 գային արդար իրաւանց կորուստնե-
 րը, և նորէն նոր յափշտակութեանց
 ձկտումները, աւելի քան զամենայն
 ցաւալին ասեմ՝ երկնաւոր թագաւո-
 րին Մտուածոյ դէտ և տէր կացու-
 ցեալ Օսմանեան Բարեխնամ Տէրու-
 թեան ողորմած թագաւորիս մի քա-
 նի անարի պաշտօնեաները, որոնք յան-

ձըն կ'առնուն ըստ բարձր կամաց
 Բարեխնամ Կայսեր իրենց պաշտօնն
 կատարել ամենայն հաւատարմութիւն
 և նորին Վեհափառութեան կամացն
 համեմատ իրաւունք և արդարութիւն
 ընել, որոց և այրեաց արդար դա-
 տաստան առնել, անիրաւաց, յափշ-
 տակաց ճիրանները կտրել, վերջապէս
 արդարները պսակել, անիրաւները
 պատժել, բայց բանիւք և եթէ Վ. Մ. Մ.
 երբ պատառիչ գայլերը կը յարձակին
 Բարեխնամ Տէրութեան հըլ և հը-
 նազանդ հպատակոց իրաւունքները
 յափշտակելու, փոխանակ քաջութիւն
 դէմ գնելու և իւր անձը նոյն հպա-
 տակին վրայ զոհելու, իբրեւ վատա-
 սիրտ հովիւ ձգելով գայլոց կամքին
 իւրեանց Տէրութեան սիրելի հպա-
 տակը, իրենք կը փախչին և աներևոյթ
 կ'ըլլան, և թշնամին զնոսա կը յափշ-
 տակէ և կը ցրուէ ըստ կամացն : Վհա-
 այս է ամենայն աղետից նախադուռն :

«Վիզըն մեր իրաւանց վրայ ըստ
 բարի կամաց Բարեխնամ Տէրու-
 թեան եթէ օրինաւոր հսկողներ ու-
 նենայինք, ինչո՞ւ այոքան պիտի մեծ-
 նար այս գո՞ծը, ո՞չ ապրքէն ոմանց
 պաշտօնէից թուրութեան և անհո-
 դութեան պտուղներն են տանք :

«Տէրութիւնը կը պահանջէ իւր
 հպատակներէն հնազանդութիւն հա-
 ւատարմութիւն, որ արդար և սեպ-
 հական իրաւունքն է, բայց երբ իւր
 հպատակները օրինաւոր կերպիւ նոյն
 պարտքերը կատարած կ'ըլլան, ար-
 դեօք Տէրութեան պարտաւորութիւն
 նըն որ ոստիճան կը ծանրանայ նոյն
 ամենահնազանդ հաւատարիմ հպա-
 տակին վրայ դուրս ունենալու, և ա-
 մենայն կերպիւ թէ անոր վրայ և թէ
 անոր բոլոր իրաւանց վրայ օրինաւո-
 րապէս հսկելու, ոչ թէ միայն անոր
 կորսուած իրաւունքները ետ դար-

ձրնեւը , այլ միանգամայն ամենայն արթնութեամբ հսկելու , որ անոր իրաւունքները չկորսուին երբէք : Թող ցուցնեն ուրեմն իմ սիրելի Հայոց ազգիս համար՝ եթէ կրնան , թէ երբ հնազանդ և հաւատարիմ չէ գտնուած այն , բոլոր աշխարհի յայտնի է արեւի նման , ստուգելու կարօտութիւն չկայ . ուրեմն այսպիսի հասարակութիւն մի իւր Վեհափառ Թագաւորին կողմէն փոխարինութիւն ըլլալու համար (զի արժանի է մշակն վարձուց իւրոց) աւոր թէ կորսուած և թէ կորսուելու անդունդին եղբրը մօտիկցած սեպ հակն իրաւանց վրայ օրինաւորապէս հսկողութիւն , անիրաւ զրպարու չին և յափշտակչին ձեռքէն ազատելու համար է զոր կը պահանջէ . նոյն պաշտպանութիւնը կը պահանջէ և Հայոց Պատրիարքը . բայց ընդհակառակը , այսօր ցաւօք կը դիտեմ թէ որ աստիճան տկարացած է Հայոց ընդհանրութեան պատիւը () սմանեան Բարեխնամ Թագաւորիս քով . որ իւր աղէտները իւր իրաւանց կորստեան համար Թափած աղի արտասուներէն ըսն կակիծները լսելի չըլլար իւր Վեհապետին . և ինչո՞ւ համար արգարութեան սուրը անիրաւ յափշտակչին գլխուն վրան շողալու տեղ՝ միշտ Հայոց Պատրիարքը կը յորդորուի , Հայոց Պատրիարքը համոզելու կ'աշխատուի , Հայոց Պատրիարքին սպանալիքներ կ'ըլլան իւր արդար սեպահանութեան իրաւունքները կ'որանցընելու համար . ո՛հ :

« Վսեմ , Տէր . մեր Բարեխնամ ու զորմած Կայսեր նպատակին և հրամանին համեմատ գործեր են ասոնք հիմայ . դուք ձեզէն դատեցէք : —

« Պատմաճներուդ մէջ ստոյգ է որ օրինաւոր իրաւունքներ կան , ըսաւ Վսեմ . Սովթասարբուֆ Պէյը . և

Ձեր իրաւանց քանի մը կոտորներուն կորսուած ըլլալը յայտնի կ'երեւի , որոյ վասն և ես ձեզ ցաւակից եմ . և խօսք ալ տուի ձեզ և կուտամ որ Բ. Պուռը ատոնք պիտի կարգադրէ , աւտոր համար անհոգ եղիք , թէ և դուք կ'ուշանայ , բայց երբէք չկորսուիր . երբ որ ըլլայ Ձեր իրաւունքները իրաւունք են , և շատերը կը վկայեն թէ դուք անոնցմէ շատ նեղուած էք և շատ ցաւեր քաշած . և նոյն ցաւերն էն որոնք ձեր սիրաւ կարեւր խօցած են և կը տագնապին ըզձեզ , ոյր վասն աւելի եռանդով կը խօսիք , և ոյր վասն դուք ալ քիչ մը յառաջ վկայեցիք և ներում խնդրեցիք ձեր տաքութեամբ խօսելուն , և ես գիտեմ որ միշտ ցաւալի սիրտ ունեցող վշտացեալ մարդ սաստիկ տաքութեամբ կը խօսի , մանաւանդ երբ դիմացի մարդոյն իւր ցաւոյն կարեկից ըլլալու նշոյն առնէ : Եւ ես կը գովեմ ձեր ոյդ եռանդը և կը վկայեմ ձեր ազգային հաւատարմութիւնը , և նոյն իսկ ոյդ հաւատարմութեան պտուղն է , որ կը վստելէ ձեր ազգը , վասնորոյ Տէրութեան ատեաններուն և բարձր պաշտօններուն մէջ բաւական ազգայիններ ունիք և հետզհետէ աւելնալու վրայ ալ են : Ետեք ձեզ համար փոքր պատիւ չեն և Բարեխնամ Տէրութիւնն ալ այնպէս դիտէ , և անոր համեմատ կը սիրէ զձեզ որպէս կը վստելէ հարազատ և հաւատարիմ հոգատակի մը . սակայն այս գործին մէջ զձեզ կը յորդորենք , կը ստիպենք այն գիտնալով միանգամայն որ Լատինք՝ ինչպէս որ կը կարծեն , այնքան իրաւունք չունին այս գործին մէջ : —

« Ինչաւ երբէք , ըսաւ Սրբազան Պատրիարքն ընդմիջելով : —

« Եւ այսօր զձեզ կը յորդորենք

որ հաճութիւնն տաք | ատինայ պա-
տարագեղուն, թէ և առանց ձեր հը-
րամանին չեմք ուզեր. ի հարկ է ՚ի
Պուռն որ և է կերպիւ ստիպուած
կ'ըլլայ որ այս խնդիրը ձեզ կ'ընէ, և
միանգամայն կը թախանձէ. և թէ կա-
րելի է այս ընել, ձեր հաւատարիմ
ըլլալուն մեծ ապացոյց մի տուած պի-
տի ըլլաք:—

«Ազգիս ընդհանրութեան իրա-
ւանց ալ անհաւատարիմ ըլլալ իմ
ձեռքս վճռած պիտի ըլլամ, ըստ
Սրբազան Պատրիարքն խօսքը ընդմի-
ջելով, և այն՝ մեծ կորուստով և ասպա-
ցոյցով ալ հաստատած և ստուգած:—

«Իսկ համոզուեցէք ինձ, խօսք
տուէք, | ատինք իրենց արարողու-
թիւնը թող կատարեն. այս փորձան-
քննանքնի որ մեծ կէտ մ'է, թող անց-
նի երթայ, անկէջ ետքը մենք ալ մեր
խօսք տուածները ի գործ դնելու
կ'ըսկսինք, կարծեմ որ դուք ալ գոհ
կ'ըլլաք. նա մանաւանդ | ատինայ
գալը այդքան ալ վնասակար չերեւիր
ինձ, բայց և այնպէս չեմ գիտեր թէ
ինչո՞ւ համար այսքան կը պնդէք. և
եթէ այդքան վնասակար էր, ինչո՞ւ
համար այնքան ատեն թոյլատրեցիք:—

«Այո, | ատինայ մենք թոյլատ-
րութիւն ըրած էինք բաւական ատե-
նէ ի վեր իբրեւ շնորհք, ոչ թէ իբ-
րեւ իրաւունք. և ամենայն սիրով
ալ կ'ընդունէինք, որուն իրենք ալ կը
վիայեն:—

«Այո, այնպէս կը վիայեն | ատին-
ները, ըսաւ նորին Վսեմութիւնը:—

«Իայց անոնք իրենց սահմանին
մէջ չմնացին, այլ իրենց դէմ քաշուած
սահմանին ցանկը պատուեցին. իբրեւ
իրաւունք պաշտօնական կերպիւ (բէ-
մէն) վայելել ուղեցին, որով մեր սեպ-
հականութեան իրաւունքը հիմն ի վեր
ստապալելու ճիգ վիթական փորձ մի ընել

ուղեցին. այր վասն մենք մեր ըրած շնորհ-
քը ետ առնել ստիպուեցանք, և վերջ-
նական կերպիւ ալ ետ առինք, և այ-
սուհետեւ այդ շնորհք անոնց ընել ան-
կարելի է Հայոց Պատրիարքին համար,
և հետեւաբար Ազգին ընդհանրու-
թեան եւս. քանի որ անոնք այն ան-
հաւատարմութիւնը ըրին մեզ թէ ի
կրօնս, թէ քաղաքականապէս և թէ ի վը-
նաս մեր տրդար սեպհականութիւն, ու-
րեմն թող ներողամիտ ըլլայ մեր Վե-
հափառ Այսօրը ընդհանուր Հայոց
ազգին, որ իւր սիրելի և հաւատա-
րիմ հպատակն է, և իւր թագաւորին
տուած և բոլոր Եւրոպիոյ քրիստոն-
եայ թագաւորաց ստորագրած և ըն-
դունած կրօնից ազատութեան վըս-
տահանալով չընդունիր իւր տանը մէջ
իւր կրօնքը, իւր ազգը նախատող
այսպնեղ և յայտնի թշնամի հիւր մը:

«Եւսեւ չեմ գիտեր թէ այս բանին
մէջ ինչո՞ւ այսքան կը տագնապի ՚ի
Պուռը, և զմեզ կ'ըստիպէ. ինչո՞ւ
չտեսնէ մեր թշնամեաց թէ՛ ալ բաւա-
կան է, իմ սիրելի հպատակիս Հայոց
ազգին վրայ բաւական ծանրացար, ծա-
նիր՝ որ ըրածներդ անիրաւութիւն է
և յայտնի թշնամութիւն, որ Տէրու-
թեանս հողին մէջ իմ սիրելի հպատա-
կիս իրաւունքները յափշտակես և ա-
նոր անհանգստութիւն պատճառես.
կացիր դու քո սահմանիդ մէջ, և շատ
է քեզ, և այն:—

(Երոնիմ-Լիւն)



ԱՌ ԵՐԱԶԱՅՈՅԶՆ ԱՐՇԱԼՈՅՍ

Սինչդեռ Ս. Աթուոյս Սիսեան
նութիւնը, երկար ժամանակէն ՚ի վեր,
կը սպասէ Ազգային Վարչութեան տը
նօրէնութեանը եգիպտական խնդրոյն
նկատմամբ, ընդհակառակն՝ եգիպ-
տահայոց ոմանց և իրենց ինքնակոչ
առաջնորդի պաշտօնական թերթին
Արշալոյս, ամենայն սորկաբար հլու-
թեամբ, իւր ստանձնած փաստաբա-
նական պոշտօնը կը շարունակէ, մերթ
ինքնագիր դիտողութիւններ և մերթ
իւր եգիպտացի թղթակցաց նամակ-
ները հրատարակելով ՚ի թշնամանս
Ս. Ուստիս Սիսեանութեան : Թէ
մինչեւ երբ պիտի Արշալոյս քամահրէ
արդարութիւնը և արացէ ճշմարտու-
թեան դէմ, այդ ժամանակակէտը
գլխաւորին է գուշակել, վասն զի գրծ-
ուարին է հաւատալ նոյնպէս, որ Ար-
շալոյս երբ և իցէ զիջանի և կամ կա-
րող լինի ճշմարտութեան աշակեր-
տիլ մաքուր խղճմտանօր : Վասն զի
կը տեսնենք ակներեւ, որ Արշալոյս
ոչ միայն հեռի է արդարութեան հը-
պատակելու և հանրութեան օգտին
ծառայելու տրամադրութենէ, ոչ
միայն օր աւուր կը յառաջադիմէ իւր
հանրաշնաս ընթացքին մէջ, այլ նաև
միաբանական Սիսեանութեանէն օգ-
տելով, սկսած է այժմ, իւր անուա-
նական և անանուն թղթակիցներով
հանդերձ, պառաւական նորանոր ե-
րազներ տեսնել եգիպտական խնդ-
րոյն նկատմամբ, և նոյն երազներով
թէ Սիսեանութիւնս ամբաստանել
և թէ Ազգային Վարչութեան ու ըն-
թերցող հասարակութեան ողջմտու-
թիւնը պատրելու ջանալ : Կը զարմա-
նանք յաւէտ, որ Արշալոյս, (թիւ 920),
իւր երազական փաստաբանութեանց

և ամբաստանութեանց հետ՝ երազա-
կան խորհուրդներ եւս կ'առաջարկէ
Սիսեանութեանս, յորդորելով չըճա-
նաչել Ազգային Վարչութիւնը և հա-
մարտու չը լինիլ նմին, այլ ուղղակի
հաշիւ տալ Ռուստտանի, Պարսկա-
տանի, Հնդկաստանի և Թուրքաս-
տանի հայազգիներէ երազով գումա-
րուած երեսփոխանական մի տարօրի-
նակ ու նորատեսիլ խողովի : Կը յա-
ւիմք, որ Արշալոյս քնացած կը կարծէ
ամեն մարդ արդարութեան համար,
ինչպէս ինքն անյարիր քնացած է ե-
րազատեսութեան և շղթքորթութե-
փոխուկ բարձին վրայ, Թող խորհայ
Արշալոյս, որչափ տիւր՝ գիշեր է ի-
րեն համար, Թող երազէ որչափ և
կամի, բայց Թող բարեհաճի գէթ այս
անգամ մեկնել մեզ իւր խոշոր երազ-
ները օգնականութեամբ եգիպտական
քրմաց, որոց ազդեցութեամբ գուցէ
երազած է :

Թող մեկնէ մեզ Արշալոյս՝ թէ երբ
և ի՞նչ գաղտնի նպաստներ ունեցած է
կամ ունի Նշուողէ մի միաբանութիւնը
Եգիպտոսի առաջնորդութեան նկատ-
մամբ : Երբ Բաշադէ է Եգիպտոսի
հայ հասարակութեան վրայ, որ Կոր-
բէն իրեն հնազանդի եւ իւր աղաք Կոր-
ապոսայն Նապահովէ : Երբ արգելք ե-
ղած է նորա յառաջադիմութե քայ-
լերուն անգլիա-թուրք, և ո՞րն է այդ յա-
ռաջադիմութիւնը :

Թող մեկնէ մեզ Արշալոյս, թէ Ե-
րուսաղէ մի Սիսեանութեան ո՞ր ե-
պիսկոպոսը, կամ որ վարդապետը հե-
տամուտ եղած է Եգիպտոսի առաջ-
նորդութեան, և կամ, անամօթաբար
վազած է Եգիպտոս և յանդգնած է,
առանց Ազգային Վարչութեան որոշ-
ման և առանց Տէրութեան հրովար-
տակի, իւր անունն յիշատակել տալ
եկեղեցեաց մէջ իբրեւ առաջնորդ,

ինչպէս համարձակեցաւ ընել Արշալուսի Բարեխնամ առաջնորդին Սեպրուպ եպիսկոպոս :

Թող պատմէ մեզ Արշալուս՝ թէ երբ փախաբաժ է Սիմոն եպիսկոպոսն Ագիտոսի առաջնորդութեան արհեստ : Սր անհատի, որ մեծատան և կամ որ լրագրապետի օգնութիւնը պաշտօնած է Ագիտոսի առաջնորդ լինելու համար : Սրուն անձնատիրութիւնը շողքորթած է բանիւ և գրով, և որուն մտքի և աշխարհային շագուցած է ոսկիներու խտաղանքով . . . :

Թող պատասխանէ մեզ Արշալուս՝ թէ ո՞վ է ինքն և ո՞վ է իւր անանուն թղթակիցն, որ կը յանդգնին Ռիսի և Կալիստի պահանջել Արուստղէմի միաբանութենէն յաւիտեան Ագիտոսի առաջնորդ լինելու համար : Սր ցնորից մէջ յղացան այդ պրոնգակ խորհուրդը՝ պոյմանագիր պահանջել աղքատին պաշտօնակատար մարմինէ մը, ինչպէս է Արուստղէմի Սիաբանութիւնը, որ դժէ իւր նուիրական ուխտին, (որով ուխտած է սպասուորել հանրութեան Ագիտին) և հրաժարի ու ըմբոստանայ աղքատին Վարդութեան և Ժողովրդի հրաւիրանաց դէմ, երբ զինքն, ըստ բերման ժամանակին և պարագայից, օրինաւորապէս ի պաշտօն կը կոչեն, ինչպէս յայտնեցաւ, նոյնպէս և յԱգիտոս : Ինչ հարկ կար պատկառանք անհեթեթ առաջարկութե, քանի որ կարող էր Արշալուս յորդոր կարգաւ և պատուէր տալ Ագիտոսի Հայ հասարակութեանը, որ երբ տեսնեն թէ՛ Արուստղէմի Սիաբանութենէն որ և իրէ անդամ կը համարձակի Սեպրուպի նման, (առանց Ագիտին Վարդութեան որոշման, առանց Տէրութեան հրովարտակի և առանց նոյն հասարակութեան ընդհանուր կամքին), յԱգիտոս աճապարել և իւր

անձը առաջնորդ հրատարակելով յիշատակել տալ եկեղեցեաց մէջ, խիստ գանակոճեն և արտաքսեն նոյն վիճակի սահմաններէն : Սա պարէն այս եղանակն աւելի բնական է և օրինաւոր, քան թէ այն պոյմանադրութե քմածին առաջարկութիւնը, որ աւաւել առաջարկողն նենգութիւնն ու խնայողութիւնը կը նշաւակէ, քան թէ օրինաւորութիւն կը պարունակէ :

Թող մեկնէ մեզ Արշալուս իւր երազական հաշուադիտութիւնը՝ թէ երբ աւարտած են Յակոբեանք Արուստղէմի Ագիտական կալուածոց հաշիւը, որքան է նոյն կալուածոց երեսնամեայ արդիւնքը, որքան գումար կամ քանի՞ փարայ հատուցած են Արուստղէմին իրենց կառավարութեան ՁՁ ամեայ երկար շրջանին մէջ. ո՞ր է հաշուեցուցակը, ինչո՞ւ չը հրատարակէր Արշալուս, որ ամեն ընթերցող կարգայ և փոխանակ երազներու՝ իրականութիւն տեսնէ և համազօրի :

Թող պատմէ Արշալուս՝ թէ ե՞րբ և ի՞նչ եղանակաւ վերջացած է կալուածական խնդիրը : Ի՞նչ շահած է Արուստղէմ իւր կալուածներէն սոյն երազական վերջաւորութենէն զինի :

Քանի՞ քանի կալուածներ կային Ագիտոսի մէջ, որ կորուսուած էին կամ փրկւած, և Ս. Վթում, գանեւու և նորոգելու համար, գումարներ ծախած է և տակաւին կը ծախէ : Քանի՞ կալուածներ կան, որ տակաւին կորուսած են և քանինքն եւս կան, որոց վարձակալները դադարապէս կը յորդորուն, որ վարձ չը հատուցանեն Արուստղէմին : Որքանի տուններ կան նմանապէս Ագիտանորից մէջ, որոց վարձական հին սակարկութիւնները բնաւ չեն աւարտիր, այլ վարձակալները, ըստ քմաց և դադարի

Թերադրու թեամբ, նորոգութիւններ կ'ընեն առանց Ս. Աթուէս հրաման և հաճութիւն խնդրելու, որպէս զի բազմաքանակ ծախքեր ցոյց տալով՝ անվերջանալի կերպիւ երկարեն իրենց վարձակալութեան շրջանը:

Թող մեկնէ մեզ Արշալոյս՝ թէ ինչու չը կամեցան Յակոբեանք իրաւախոհ լինիլ Արուստղէմի փոխանորդ Աստուածատուր վարդապետի հետ, հաշտեալ մարները և բոլոր կողմաւ ծագրերը յանձնել, իրենց պարտքը վճարել եւ Արուստղէմի օրինաւոր սեպհականութիւնները լրիւ նոյն Աթոռին վերադարձնել, այլ ընդհակառակն հարկւրաւոր մեքենաներ լաւելով և պատրուակներ հնարելով՝ ապհապեցին, չարչարեցին և հալածեցին նոյն փոխանորդը, որպէս զի քանի մի տարի եւս խնդիրը յետաձգեն և իրենց խաղերը խաղան:

Թող յօգնութիւն կոչէ Արշալոյս իւր թղթակիցները և մի առ մի պաւտասխանէ մեր սոյն ամեն հարցումներուն, առանց յաջ և յահեակ խոտորելու, և առանց երազներ երազելու: Իսկ մեք՝ ի միամտութիւն Արշալոյս և իւրոյնց, ի լուր Ագգային Վարչութեան և համօրէն Ագգին, կը քարոզեմք ահա, որ Արուստղէմի Սիւրբանութեան յուզած խնդիրը բնաւ երբէք Ագգայտոսի առաջնորդական խնդիրը չէ, այլ լոկ կալուածականն, փոսըն զի ինքն ագգային սեպհականութեանց աւանդապահ լինելով՝ իւր նախնական պարտքն է իւր ամեն ճիշդը թափել, Ագգային Վարչութեան ուշադրութիւնը հրաւիրել և համազգական Աթոռոյ սեպհականութիւնները անհատական բռնաբարութիւններէ ազատել: Կը հրատարակենք ի լուր աշխարհի, որ առաջնորդական խնդիրը կալուածական

նին հետ խառնաշփոթելը միմիայն և յատկապէս Արշալոյսին նենգամիտ հնարագիտութիւնն է, կալուածական խնդրէն խուսափելու համար, և ոչ թէ Արուստղէմի Սիւրբանութեան տենչանքը. վասն զի նոյն Սիւրբանութիւնը, որպէս պատուիրանապահ խաղերու Աւետարանի, ուխտած է և կ'ուխտէ, ոչ միայն Ագգայտոսի, այլ և ամեն հայաբնակ քաղաքներու և թեմերու մէջ մի միայն իւր ողջոյնը ընդունողներու մէջ ագանկել, իսկ չընդունող քաղաքներէն ելանել անգորր սրտիւ, յուսալով որ չեն սպառիր իւր առջեւ հայաբնակ թեմերը, քաղաքները և աւանները: Արուստղէմի միաբանութիւնը չը տածեր և չը փափաքիր տածել երբէք այն անամօթ տենչանքը, որով ոմանք, ինքնեկ և ինքնակոչ առաջնորդութեամբ, եկեղեցական վսեմ պաշտօնն ու կոչումը կ'աղարտեն, ոմանք իրենց անձն արածելու համար՝ Ժողովուրդը կ'երկաւաւակեն, ոմանք թեմականներէն կ'ամբաստանուին, կ'աքսորուին և վերստին կը դառնան բռնաբար տիրապետելու համար. ոմանք Ագգային Վարչութեան դէմ կը մբոստանան և կենսական գործքերէ արգիլելով իրենց անհատական փառասիրութեան սնտի գործքերով կը զբաղեցնեն. ոմանք իրենց անգոյ մեծագործութիւնքը ներբողելու համար վարձկան գրիչներ կը պահեն, և ոմանք ամեն թուք ու մուր կ'ընդունին և երբէք իրենց վիճակէն կամովին հրաժարիլ և հեռանալ չեն ուզեր:

Իսկ գալով Արուստղէմի միաբանական Ուխտի համարատուութեան խնդրոյն առաջի Ագգային Վարչութե, թէպէտ այս մասին իմաստակ և անխորհուրդ օրագրական թերթիկներ ոմանք ընթատ և անհամարապատ հրատար

բռնկեցին նոյն Սեփոր, և Արշալույս նենգութեամբ կռուաջարկէ համազգային երեսփոխաններէ կազմուած անգղայ ժողովի առջեւ միայն համարատու լինիլ. բայց Արշալույս միաբանութիւնը, քամահրելով ամեն սոյն օրինակ յարձակումներ և դաւադիր խորհուրդներ, երկար ժամանակէն ՚ի վեր ամենայն մտադիր ջանիւք կը պատրաստէ իւր հաշիւները՝ Աղգային Վարչութեանը մատուցանելու, և զինքն համարատու կը ծանաչէ ոչ միայն նոյն Վարչութեան, այլ նաեւ ամեն հայ անհատի առջեւ: Բայց թէ ինչո՞ւ կը յապաղի սոյն համարատուութիւնը, այս մասին միաբանութիւնը չէ յանցաւորը, այլ նոյն իսկ այն մարդիկը, որոնք չեն ուզեր վճարել առ Ս. Աթոռն ունեցած իրենց համարատուութեան պարտքը: Օրինակի համար, Արշալույսի Սիւրբանութիւնը ի՞նչ լիակատար հաշիւ կարող է մատուցանել Աղգային Վարչութեանը Արքիպոսի և Աղէքսանդրիայ կալուածոց նկատմամբ, քանի որ ծախուց գումար միայն կը տեսնէ իւր հաշուետուամարներուն մէջ, իսկ երեսնամեայ մտից և արդեանց գումար ոչ երբեք: Սուրբն, միթէ բարւոք չէր լինիր, որ Արշալույս, փոխանակ տաքնապելու և համազգային երեսփոխանական ժողովի կազմութիւն երազելու, ջանար յորդորել իւր սատարները, որ Արշալույսի կալուածական հաշիւն փութով աւարտէին, և Սիւրբանութիւնս կարող լինէր օր առաջ իւր համարատուութեան արդար և նուիրական պարտքը կատարել և իւր հաշիւները Աղգային Վարչութեանը մատուցանել: Սիւրբն բարւոք չէր լինիր, որ Արշալույս, փոխանակ մասնաւոր կուսակցութեան ծառայելու, ջանար իրապէս աղգային հրապարական թեր-

թի պաշտօն կատարել և Արշալույսի Սիւրբանութեան արդար իրաւունքը պաշտպանել, որ ընդհանուր Աղգի իրաւունքն է: Ի՞նչ կը կարծէ Արշալույս, միթէ թիւր և երազական դիտողութիւններ հրատարակելով՝ կարող է լռեցնել արդարութեան և իրաւանց ձայնը: Թող չըխաբուի Արշալույս իւր անտի յոյսերով և թող քաջ խելամըտէ, որ Արշալույսի Սիւրբանութիւր բողոքած է, կը բողոքէ և պիտի բողոքէ Աղգի իրաւունքը պաշտպանելու համար. վասն զի համոզուած է, որ իւր բողոքն արդար է և իւր աղաղակն է ընդհանուր Աղգի ԻՐԱՅԱՆՑ ԱՂԱՂԱԿՆ: Եւ միթէ Աղգային Վարչութեան նուիրական պարտքն չէ առաջնորդական խնդիրէն առաջ կալուածական աւարտել, որուն համար այսչափ ժամանակէն ՚ի վեր կը նեղի Ս. Աթոռս: Սիւրբն պիտի չսկատարէ նոյն Վարչութիւնը իւր անսուտ խոստումը, որուն ակնդէտ կը սպասէ Ս. Աթոռոյս Սիւրբանութիւնը:

Ա. Ռ. Ա. Կ

ՈՉԻԱՐ ԵՒ ԱՅԾ.

Զուարթագին խիստ բաղդը առուց մէջ գարնան երբ սքանաղորդ երկիրն հազուած անման ծաղիկներով զարդարուած էր շատ շուրջ. Դաշտը և լեռինք կը խայտային գեղափաղ. Կանաչազարդ մարգագետին ամեն տեղ. Եր ծածանին կը փալկան գունագեղ. Հօտ մի խաշանց առտուն կանուխ խոնք վին Տեսայ կու գար առջեւ ինկած իւր հովութիւն. Ծագեց արփին, նորա դէս դէն ցրուցան Տօղարարձիկ մարգեր ուտել սկսան. Դաշտին մէկ գին ապառաժուս լեռ մի կար. Որսեպաշտ խիստ ժայռերով բարձրանայր:

Այս դարու փոս ժայռուս լերին դարեւանդը
կանչկրտային ակնահաճոյ դարար մարգ,
Գիտե՛ք այժն ի՛նչ կամակոր է և յաճառ,
Կը դայրացնէ իւր հովիւներն անդադար:
Բաժնուեցաւ քանի տեղամ երամեն:

Բայց կասեցաւ պահապանաց հարուածէն,
Մէկ ալ տեսնես պատրեց հովուին սուր ակնարկ,
Ցատկեց խկոյն անցաւ գահերն կարգ 'ի կարգ:
Երբ ինքզինք հովուին ձեռքէն աղատեց,

Բարձրէն մեղմիկ իւր ընկերին ձայն տուեց,
Գառնուկ մ'էր այս որ նոյն լերին քորորտ
Հանդարտ և գոհ կ'ուտէր անոյշ մարգ արօտ:
Անմեղ գառան ըսաւ այժը խորամանկ.

«Քուրուկ ինչո՞ւ այդ տեղ կենտալ ցած անարգ
Գերութիւն չէ՞ այդ քո վիճակ շարունակ
Որ լուռ ու մռնել կրես հովուին խիստ մահակ:
Ո՛հ, ի՛նչ դառն է կամքի արգելուլ հաճոյքէն:

Այդպէս կեանքը աւելի վատ է մահէն,
Ազատութեան աես ի՛նչ աղուոր օրինակ
Մեծ քայլութեամբ ահա կուտամ քեզ հիմակ:
Հետեւէ ինձ շատ գոհ կ'ըլնես և ուրախ,

Ձի այս տեղերն ապահով են և խաղաղ,
Գառնուկ մեղք ես, մի՛ կաշկանդուիր լուծի տակ,
Անմառութիւն ձրգէ, մէկդի եկ ցնձանք:
Թէ՛ խօտ կ'ուզես՝ աստ լեցուն է, գեղեցիկ

Արօտներ կան որ կեանք կուտան մեզ քաղցրիկ,
Երջանկութիւն, գիտես անշուշտ որ մինչ աստ
Հովուին անգուլթ չի դար հասներ փայտն ու սառտ:
Ո՛հ, այս միայն հերիք բերկրանք մեր սրտին:

Բայց եկ ու տես որ կայ այս տեղ աւելին,
Միթէ՛, հոգի, չե՞ս տեսներ սո՞ դարեւանդք,
Ուր շողշողան սրտարգաւ պերճ՝ մարմանդք:
Կանանչադեղ մարգագ ահա մեծ հոսանք

Որ հեղեղի նման կարծես տան հորդան,
Եւ գունագեղ ալեծածան ծփծփան
Կը հրապուրեն և սրտերու շունչ կը տուն:
Ես կ'ուզեմ որ դուն քու փորձով համոզուես

Մէկ մ'որ տեսնես, անհնար է բաժնուիս,
Եկ այս բաղդէն, եկ գոնէ դու մի՛ զրկուիր,
Իմ խօսքերուս ալ մի՛ լինիր գլմադիր:
Այս հրապուրիչ և գրգռող խօսքերէն

Համոզուեցաւ կարծես գառնուկն, ու մէկէն
Գլուխ վերցուց գնալ այժոյն ետեւէն,
Թողուլ այն կեանք որ պալտս լէր հոգնանէն:
Բայց և յանկարծ կանգ առաւ,

Մտքովն աղէկ խորհեցաւ,
«Այս ի՛նչ խենդ եմ ես, ըսաւ,
Որ չեմ ճաննար այժոռն դաւ:
Ազատ վիճակն որո՞ւն է,

Ի՛նչն է արդեօք՝ թէ ի՞նչ է,
Նա առապար ժայռերէ
Վեր ելնել ստիպուեր է:
Խօտ կայ՝ չի կայ, ո՞վ գիտէ,

Մինչդեռ այս դաշտ խիստ մեծ է,
Աւատ խոտով լեցուն է,

Ո՞ր բիւր խաշանց կը բաւէ: ո

Այժը խաբեց զիս, ըսաւ:

Առջե տեղը ետ դարձաւ:
Եւ այժոռն ըսաւ:

«Հովուին անշուշտ արդար է:

Մի թէ հնարք չը գիտէ՝

Քուրուկ յանկարծ հոգ կ'ըլլէ

Եւ մեղ լաւ մը կը ծեծէ:

Դուն այս ալ մէկդի ձգէ:

Հապա այդ տեղ դարան շատ:

Գաղան կըլնի պահուած անդ,

Թէ որ վրադ դայ յանկարծ:

Չես աղատիր, անկասկած:

Ես իմ վիճակէս

Գոհ եմ մեծապէս:

Հա լայն ստապարէզ

Կ'ուտեմ մարգ և սեղ:

Խմեմ ջուր առատ:

Խաղամ աստ և անդ:

Չը կայ մեղ վտանգ:

Թէ հանդարտ կենանք՝

Քու խօսքդ է խաբանք

Միշտ գաւ և հնարք: ո

Ըսաւ այժը, «Կեցիր ուրեմն այդ ցածութեամբ,
Անցուր կեանքդ նախատակած վատ գերութեամբ,
Տես ես ի՛նչպէս այս տեղ ազատ ցաթկեմ խաղամ,
Տես թէ հովուին ձայնին երբեք ականջ կուտամ:

Երջանկութիւն, ո՛հ ի՛նչ լաւ է:

Ահա սա տեղ ջուր կը վազէ:

Ալ դուն որչափ կուզես խօսէ:

Ես չեմ ի՛նչար բնաւ ասկէ: ո

Գիտցաւ ոչխարն որ սուտ էր նա:

Ըսաւ անոր, «Ո՞վ սառտանայ,

Դու շարունակ ստախօս ես,

Պարզամտներն խաբել կ'ուզես:

Թէ այդ տեղէն ջուր կը բղկի

Այս ժայռէն վար չի պլտի հոսի:

Ուր է այդ տեղ ջրի հոսանք:

Գլխիս կ'ուզես բերել փորձանք, ո

Շուարեցաւ առ վարկի մի այժ անդգամ,
Ճարպիկութեամբ գտաւ հնարք և այս անգամ,
Պատահանեց կակաղելով և խիստ տարտամ
Թէ՛ «Դուն ալ ի՛նչ կընես այդպէս թիւր դատաս»
տան:

Աստ հապիկ լայնաբերան կայ մի խոռոչ:

Անկէց կ'երթայ, չես լսեր դու ջրոյն խոխոջ:

Բայց թէ կամի՝ արդ եկու տես:

Թէ չես ուզեր՝ այն դու գիտես: ո

Այս ըսելով սկսեց,

Քարէ 'ի քար ցաթկուտեց

Մէկ մը վեր՝ մէկ մը վար

Կը ոռոտուէր անդադար:

Խաղեր կ'ընէր խիստ ճարտար:

Բայց իւր սիրտն ալ կը գողար:

Քարին ծերպէն անակնկալ
Քաղցած գայլ մի դաւանակալ
Յատկեց խնայն վերայ այծուռն,
Բայց չի կրցաւ հասնիլ սրտոյն:
Քանզի ճարպիկ այծն ինքնագով
Յանկարծ վախուռն իրատ իջեւով:
Թռաւ մէկէն թեթեւ սոյնի
Կարծեց ժայռերն իւր խաղալիկ:
Բայց չը գտաւ ոտից կռուան,
Փոքրիկ ստերն իրար անցան,
Լպիրժ ժայռէն գլորեցաւ,
Անեղ գառան առջեւ ինկաւ
Եւ ջարդու փշուր խորտակեցաւ:
Գառն Ատուածմէ շատ գոհացաւ,
Որ վտանգէ ազատեցաւ:
Հովուն խնայն այն տեղ եկաւ,
Եւ ջաւ 'ի սիրտ այսպէս ըսաւ.
«Արժան էր քեզ, ո՛ր անկրաւ,
Որ այդ փորձանք քեզ դիպեցաւ:
Սուտ և յամառ կամապաշտին
Յանձնապատան չարագործին
Որ չը դիտէր շտի իւր անձին,
Այս է հարկաւ վերջին բաժին:»

Այս իմ առանկ ճշմարիտ
Ոսկի մանեակ մարգարիտ,
Քեզ առ խրատ օգտակար
Եւ մի թողուր արհամարհ:
Գոռն որ դատարի շատիօսիկ
Լեզու կրէս խաբուսիկ,
Գիտցիր որ իմ այս առանկ
Քեզ կ'ընէ միշտ խայտառակ:
Մի կարծեր որ խօքս քեզ չէ
Այլ ճիշդ ինձ ու քեզ համար է:
Վարդգէս:

ՇԻՒԼՈՆԻ ԲԱՆՏԱՐԿԵԱԼԸ(*)

ՆԱԽԵՐԳ.

Լինկախ հոգւոյն շունչդ յաւերժա-
կան, Լգատուծիւն, դու ոչ այլ ու-
րեք այնչափ փողփողուն ես, որչափ
խաւարչտին բանտերու մէջ: Հո՛ն,

(*) Շիրանի գղեակը Քլարէնսի և Վինէօվի
մէջ տեղը կիսայ, որ Ճենեփայի լճին ծայրը շնուած
քաղաք մ'է: Հռոգանոս (Ռօն) գետը Շիրանի ձախ
կողմէն կը յորդէ Դղեակին գիմնը կ'երեւան Պո-

դու սրտից մէջ կը բնակիւ—սիրտը՝ զոր
քու սէրէդ 'ի դատ և ոչ մէկ սէր մը
չէ կարող գերել, և երբ որդիքդ եր-
կաթնեքու մասնուած խոնաւ գետ-
նափորի մը աղճամղլին արհաւրացը մէջ
կը հեծեծեն, իրենց մարտիրոսութիւն
հայրենեաց յաղթանակը կը հիմնէ և
անկախութեան փառքը սաւառնաթեւ
կը սլանայ հողմոց թեւերուն վրայ:
Շիրան, քու բանագ սրբավայր մ'է,
քու տխրամած սաղայատակդ սեղան
մ'է—զի Պօնիփառ քայլեց նորա վը-
րայէն և իւր քայլերը իրենց հետքերը
դրօշմեցին հոն իբրեւ թէ դաշտի մը
վրայ—այն հետքերը չըլլայ որ ջնջուին,
նորա բռնաւորութեան դէմ բողբո-
ւարիւ եւն առ Ատուած:

Վերէի և Սէն—Ճենիօյի վրայէն Լա Մէլլերի բար-
ձունքը և Ալբեանց գօտին: Լիճը՝ որ գղեակին պա-
րիսպները կը թանայ՝ այս տեղւոյ մօտերը Գաղղե-
ական չախով ութ հարիւր ոտք խորութիւն ունի:
Իւր սպիտակ պարիսպներով խնտ հեռուէն ալ
երեւցող այս գղեակը բաւական ընդարձակ չէր
է, ներքնակողմը բանտերու բաժնուած, ուր միջին
դարու մէջ հերետիկոսք կը բանտարկուէին: Ետոյ
քաղաքական յանցաւորաց յատկացաւ Ռոմին երկայ-
նութեանը ժամանակէն սեւացեալ գերան մը կայ:
ստի պատժապարտաց կառափնառի տեղ կը ծա-
ռայէր:

Ժե դարուն վերջերը Ճենեփայ քաղաքը իւր
չուրջը դանտած բռնաւորներուն ձեռքն ինտալու-
փոանգի մէջ էր: Պօնիփառ իւր հայրենեաց ան-
կախութեան ամենէն անվահեր անոյեաններէն մէկն
էղաւ և նորա համար ինքզինքը զոհեց: Սափօյի
Դուքսը 1519ին Ճենեփա մօտ ըլլալով մասնու-
ծեամբ Պօնիփառ ձեռք ձգեց և զիտնալով նորա
անհաշտ ատելութիւնը իւր իշխանութեանը դէմ,
նախ կրօյի մէջ բանտարկել տուաւ զայն երկու
տարի, յետոյ Շիրանի գղեակը փոխադրեց, ուր վեց
տարի մնաց չըթայակապ մինչեւ որ Պեռնայիք 1556ին
Վօտի գաւառին տիրելով զինքն ալ ազատեցին:

Բանտէն ելնալուն Պօնիփառ իւր հայրենիքը ա-
զատ և վերանորոգեալ գտնելու երջանկութիւնն ու-
նեցաւ: Հասարակագետութեան (Հեղուեփոյ) և իւր
քաղաքակցաց երախտագիտութեանն ու մեծարանա-
ցը արժանացաւ և մինչեւ մահը չ'դադրեցաւ բնաւ
երկրին բարօրութեան համար աշխատել:

Ա .

Հերբս սպիտակացած են . բայց ոչ եթէ ամաց ազդեցութեամբ . ոչ ալ մէկ գիշերուան մէջ սպիտակացած են , ինչպէս կը պատահի ոմանց յանկարծական երկիւղի մ' տառն : Այլ եթէ յոգնութիւնը կորսցուցած է իմ անդամներս . անարգ հանգստեան մը մէջ ժանգոտած են նոքս , վասն զի խաւար արգելանի մը ճարակ եղան . ես բաղդակից եղայ անոնց , որոց արգիւղած է , արգիւղեալ պտղայ մը նման , աշխարհի և օգին վայելումը . հօրս կրօնքին համար էր որ գերութեան տարի , մահ փնտռեցի : Հայրս գելուցի վրայ մեռաւ , նահատակ ըլլալով իւր հաւատքին վրայ ունեցած հաստատամտութեանը և մի և նոյն պատճառաւ իւր որդիքն ալ աղքատը ինքանտի մը մէջ բնակեցան :

Եթէ եղբայր էինք—մէկ մը միայն մնացած է արդ . փէց երիտասարդք և մէկ ծերունի մը վախճանեցին կեանքերին , այնպէս ինչպէս սկսած էին զայն , հարստանաց կատաղութեանը վրայ խորխտալով եղբարցս մէկը խալոյկին վրայ և երկուքը պատերազմի դաշտին մէջ հաւատքնին իրենց արեամբը կիքեցին և մեռան , իրենց հօրը նման , իրենց թշնամեաց ուրացած Մտուածոյն համար . միւս երեքը խաւարին բանտի մը մէջ նետուեցան և ասոնց վերջին մնացորդը ես եմ :

Բ .

Շիլլանի խոր և հին աւուրց բանտերուն մէջ գոթական ձեւով եօթը մայթեր կան , միակտուր և գորշախայտ սիւններ կան , զորս ազօտ կերպով մը կը լուսաւորէ նսեմ և գերի նշոյլ մը ,

արեգակին մարտնչող և գրեթէ թանձր սրմին ճեղքուածներուն մէջ կորուսեալ մէկ ճառագայթը , որ խոնաւ սալայտակին վրայ կը սողայ նման ճախճախուտէ մը ելած օգերեւոյթին : Իւրաքանչիւր մայթին վրայ օղտի մը կայ և իւրաքանչիւր օղտին շղթայ մը կապուած է . մոշեյնող մետաղ մ' է առի . վասն զի անդամներուս վրայ իր գրոշմած տկուսները այնպիսի նշաններ թողուցած են , որ բնաւ չպիտի ջնջուին մինչև այն օրը , որ յաւիտեանս թողում այս ինծի համար նոր տեսակ մը ըլլար , որուն առանց ցաւոց չեն կրնար աչքէրս հանդուրժել աչքերս , որ այս կերպով արեւուն ծագիլը տեսած չեն շատ տարիներէ ՚ի վեր—որ չափ ըլլող չեմ գիտեր , այս երկայն և դժուարին հաշիւս գաղբեցայ ընել է այն օրը , յորում իմ եղբարցս յետինը վնասէն ընկճեալ մեռաւ , և ես տակաւին կենդանի , իւր քովը գետնամած մնացի :

Գ .

Իւրաքանչիւրս մայթերէն մէկուն կապուեցանք . երեք հօգի էինք , և սակայն երէքնիս ալ առանձին էինք . բայց մ'անգամ չէինք կրնար տեղեր նուս երերալ . իրարու դէմք չէինք տեսներ , բայց եթէ այն տփոյն և աղօտ նշոյլով , որ զմեզ իրարու անձանաչելի կրնէր : Այսպէս միացած և սակայն անջատուած , երկաթը ձեռքերնուս վրայ , մարմնը սրտերնուս մէջ , բայց տակաւին քաղցրութիւն մը կոր , որ աշխարհի ամենէն կենսական տարեքներէն զուրկ վիճակ նուս մէջ , կրնայինք գտնէ իրարու հետ խօսակցել , զիրար փոխադարձաբար մը խիթարել , յոյսերնիս մէկմեկու հաղորդել , անյնկայն սրտմուծութիւններ

որն ընել և դիւցազնական ու քաջա-
լերիչ երգեր եղանակել: Բայց այս
երգերս իսկ ցրտացան. ձայներնիս,
երբեմն զօրեղ և հնչուն, եղբրական
և շիտթ եղանակ մ'առին. կարծես
թէ բանտին պատերուն արձագանքն
էր. թերեւս ցնորք մ'ըլար տաի —
բայց ինձ կը թուէր թէ իրենց սովու-
րական եղանակը կորուսած էին:

Դ.

Երբեք եղբարցս անդրանիկն էի ես,
ինձի կ'լցնար միւսներուն քաջաբերու-
թիւն տալ և զանոնք մխիթարել. կըր-
ցածիս չափ ըրի, ինչպէս նաեւ ա-
նոնք ալ ըրին: Ամենէն կրտսերը, զորն
որ հայրս շատ կը սիրէր մեր մօրը դի-
մաց գծագրութիւնը ունենալուն հա-
մար — երկնից կապուտակին նման կա-
պոյտ աչքներով մասնաւորապէս սիր-
տըս անոր վրայ դառն կերպով կըմըր-
մոքէր. և ինչպէ՞ն չը մըրմոքէր, երբ
այսպիսի թուշուն մը կը տեսնէի սոյս
պիտի բոյնի մը մէջ. վասն զի լուսոյ
նման գեղեցիկ էր, (երբ աղատ ե-
ղած ատենս գեղեցիկ էր լոյսը ինձ
համար ինչպէս արծուին ձագերուն
համար) գեղեցիկ բեւեռային լուսոյ
մը նման, արիւնոյն այս ձիւնազգեստ
որդւոյն նման, որուն տեւողութիւնը
կը պարունակէ անքուն ամառուան մը
երկարատեւ պայծառութիւնը: Սի-
րուն զուարթութեամբ մը օժտեալ,
արտասուէր ուրիշի համար միայն կը
հեղուր, և իւր արտասուաց առա-
տութիւնը, երբ չը կարենար սիովել
վիշտը, որուն տեսքին չէր կրնար բե-
րել, կը նմանէր հեղեղներու որ լե-
րանց կողերն 'ի վար ակօսածեւ կը
յորդեն:

Ե.

Սիւսն ալ նոյն չափ անարատ հո-
գի մ'ունէր, բայց բնութիւնը իւր
տեսակին դէմ կռուելու խիստ յար-
մար կազմուածք մը տուէր էր իրեն:
Սարմեղ և կորովի, իւր անվհերքու-
թեամբը պիտի արհամարհէր եթէ
աշխարհ համայն սպառազինեալ իւր
դիմացն ելնէր. ճակատամարտին ա-
ռաջին կարգին մէջ պատերազմելով
ուրախութեամբ մեռնելու համար
ստեղծուած էր գողցես — բայց ոչ եթէ
կապանաց տակ ծիւրելու համար: Իւր
չղթայից շկահիւն իւր քաջութիւնը
մարեց. տեսայ որ լուռ և մունջ գը-
լւին 'ի վար կը խոնարհէր — թերեւս
նոյնը ինձ ալ պատահեցաւ. բայց ես
ինքս ինձի ուժ տուի որպէս զի այնչափ
սիրելի գերդաստանի մը այս նշխար-
ները կենդանացնեմ: Ճիշդ լերանց
պարզ մին էր ինքը. գայլին և եղնու-
գին հետամուտ եղած էր ատենօք,
այս նսեմատուներ նկուղը անդունդ
մ'էր իրեն համար, և ոտընները շղթ-
թայած տեսները աշխարհի ամենէն
դառն աղէտքը:

Զ.

Շիլանի պատուարաց ստորոտը
Լեման լիճը մինչեւ հազար տանաչափ
խորութեամբ իւր ջուրերը կը տա-
րածէ, գոնէ այդքանը կրցած է հա-
շուել խորաշափը, ջուրերուն շրջա-
պատած սպիտակ և ատամնաձեւ պա-
տուարներուն վրայէն: Ալիք և որ-
մունք այս տեղոյս ջուրը կրկին պառ-
նէչ մը կը կազմեն, և գրեթէ կենդա-
նի գերեզման մը կը դարձնեն զայն:
Սեր մթին բանտին դիւրքը Լճին մա-
կերեւոյթէն ցած ըլլալուն, ամեն օր

ջուրին ծփալուէն ձայնը կը լսէինք գըլ-
լուխնուս վրայ . մինչեւ անգամ եւ
զած է որ մըրկաշունչ հովի մը երկ-
նից մէջ երջանիկ և տղատ խաղացած
ատեն , զգացած եմ փրփուրներուն
վանդակասիւններէն ներս ժայթքելը .
այն ատեն քառաժայռը ամբողջ կը
ոստանէր և ես ամենեւին երկիւղ
չէի զգար . զի ժպիտ 'ի շուրթն պիտի
տեսնէի մահուան դալուստը , որ զիս
շղթայներէս պիտի փրկէր :

Է .

Արդէն ըսի թէ եղբարցս երկրորդ
դը յուսահատութեան մէջ ինկած
էր . ըսի թէ իւր անվն հեր սիրտը ան-
մխիթար կը հիւժէր . բնաւ սնունդ
մը բերանը չէր դնէր . ոչ թէ անոր
համար , որ դժնեայ և կոշտ բնաւորու-
թիւն մ' ունէր , վասն զի մենք որ-
սորդներու գրութեանը վարժուած
էինք և այս բանս ամենեւին հոգեւ-
նիս չէր : Երան այժեամի կամ թին տե-
ղը խրամներուն ջուրը կը բերէին մե-
զի . մեր հացը այն հացն էր , զորնոր
հազարաւոր տարիներէ 'ի վեր իրենց
արտասուօքը թրջած են կալանաւոր-
ները , այն օրէն 'ի վեր , յորում ա-
ռաջին անգամ մարդը իւր նմանը ա-
նասնոյ մը պէս երկաթէ վանդակի
մը մէջ ապրելու դատապարտեց : Բայց
ասկէ ինչ կ'ըլլար . ասի իւր քաջասրը-
տութիւնը կամ մարմինը տկարացնե-
լու չափ բան մը չէր : Բայց եղբօրս
հոգին այն տեսակ հոգիներէն էր , զորս
պալատի մը բնակութիւնն իսկ չը սա-
ռուցանէ , եթէ լերանց սեպածեւ կո-
կողերն 'ի վեր վազելու և ազատ օդ
մը շնչելու թոյլտուութիւն չունե-
նան : Անձը , ինչո՞ւ ալ երկայն ատեն
ճամարտութիւնը թագուցանեմ : —
Սեռաւ նա : Ես տեսայ զայն , և հա-

կառակ այն ընդունայն ճգանցս որով
կուղէի շղթայներս խորտակել կամ
կրծել , չկարողացայ գէթ իւր դուխը
վեր առնուլ և իւր օրհասական ձեռ-
քերը բռնել — ոչ իսկ այն ատեն երբ
մահը սառեցուցած էր զանոնք : Սե-
ռաւ նա . և լուծեցին զայն շղթայէն
և մեր բանտին խոնաւ հողին մէջ նեղ
փոս մը փորեցին իրեն համար : Այս
չեցի , պաշտօնեցայ իրենց , որ իբրեւ
շնորհք մը զայն լոյս եղած տեղ մը թա-
ղեն : — Յիմարական խորհուրդ մ' էր
ասի . բայց այնպէս կ'երեւակայէի թէ
իր մահուանէն ետքն իսկ ազատ մար-
դու մը այս սիրտը չէր կրնար հանգ-
չիլ այնպիսի սեւաստուեր տեղ ու մը
մէջ : Այս անօգուտ խնդրուածքը չը-
նէի ալ կ'ըլլար . — ցուրտ կերպով մը
ծիծաղեցան միայն և հոն թաղեցին
զինքը : Տափարակ և անդալար հող
մը ծածկեց զայն որ այնչափ սիրելի ե-
ղած էր մ' : Եւ 'ի թաղուած տեղւոյն
վրայ դատարկ մնաց իւր շղթայն , այս-
պիսի մարդասպանութեան մը ար-
ժանաւոր յիշատակ :


Ը .

Բայց միւսը , մեր տանը ծաղիկը ,
ծնանէլէն 'ի վեր ամենէն աւելի սի-
րելին գեղեցիկութեամբը , իւր մօրը
պատկերը , գերդաստանին ընտրեա-
գոյն զաւակը , նահատակ հօր մը գե-
րագոյն խորհրդածութեան և իմ վեր-
ջին հոգատարութեանս առարկայն ,
այն որուն համար կըրպահայնէի կէտն-
քըս , որպէս զի ներկային մէջ նուազ
թշուառ և օր մ' ալ բոլորովին ազատ
ըլլայ , նա ալ որ մինչեւ այն ատեն բը-
նական կամ ներշնչեալ զուարթութի
մը ցուցուցած էր , նա ալ վարակե-
ցաւ : Տեսայ , և ահա այն դեռափթիթ
ծաղիկն ալ կը թարշամբ իւր ցօղունին

վրայ . . . Աստուած իմ, սոսկալի բան է հոգւոյն երթը տեսնելը, ինչ կերպով ալ որ ըլլայ : Տեսած եմ անոր աւրեան ճապաղեաց մէջէն խուսափիլը, տեսած եմ անոր Ալիէանու զայրացեալ կոհակաց հետ ջրգողական օրհասի մը սարսուռով մարտնչիլը, նկատած եմ Աղեռան իւր տոգոյն և գերեզմանական մահճին մէջ՝ իւր խօլական ցնորիցը առարկայ լինելը . անշուշտ զարհուրելի տեսարաններ էին ասոնք : Հոս բնաւ ասոնց նման բան չկայ. հոս յամր, բայց անխուսափելի մահ մը, Այնքան խաղաղ համբերատարութիւն մը չիջաւ . այնքան անգործութեամբ և քաղցրութեամբ տեսաւ իւր հիւծիլը, դալիանալը, առանց իրեն համար արտասուք մ'անգամ թափելու : Իւր գործվագութիւն հոգին միայն անոնց վրայ կը վշտանար, զորս իւր ետեւէն պիտի թողուր . և բոլոր այս միջոցիս իւր այտերը անանկ թարմութիւն մ'ունէին, որ կարծես սուտ հանել կ'ուզէին մահուան տագնապը, և որոնց երանգները տակաւ առ տակաւ և աստիճան առ աստիճան աներեւոյթ եղան, հանգոյն ծիածանի մը աներեւութանալուն : Իւր աշուրները դեռ այնպիսի թափանցիկ փայլ մը ունէին, որ գոգցես համայն բանտը կը լուսաւորէր : — Եւ ոչ մէկ վանկ մը տրտնջանաց, — և ոչ մէկ հառաչանք մը իր կանխահաս վախճանին համար — մէկ քանի խօսք լուսագոյն օրերու վրայօք — մէկ քանի բառ զիս ամրապնդելու մտքով — վասն զի ընկճած, յուսակրտուր եղած էի այս կորուստիս զգացմամբը, կորուստներուս վերջինը եւ ամենէն ահաւորը : Յետոյ հոգեվարք բնութեան տկարութենէն խլուած հառաչքները, զորս կը ջանար լուեցունել, վայրկենէ վայրկեան աւելի սաղաւ և աւելի յամր կ'ըլլային : Այնչ

դրի, բայց ալ բան մը չսեցի . մեծածայն գոչեցի, վասն զի երկիւղը զիս խելայեղ դարձուցած էր . գիտէի որ աղաղակներս ընդունայն էին, բայց սրտիս տագնապը բանականութեանս խրատ չէր հարցընէր : Գոչեցի, և ինծի այնպէս թուեցաւ թէ ձայն մը լսեցի : Ալեգին կատաղութեամբ մը որոտընդոստ շղթայս կոտրելով գէպի իրեն վազեցի — այլ ոչ եւս էր նա : Եւ միայն մնացած էի այս գիշերաստուեր օթեվանիս մէջ . եւ միայն կ'ապրէի . եւ միայն բանտիս խոնաւ և անիծեալ օդը կը շնչէի . այն յետին միակ և ցանկալի օդակը, որ կար իմ և յաւիտենական վճին մէջ տեղ, և որ կը լծորդէր զիս իմ չուառ աղագատհմիս հետ, ահաւասիկ կը խորտակէր այս չարագուշակ տեղւոյս մէջ : Երկու եղբայրներէս մին հողին տակն էր, միւսը վրան, երկուքն ալ ապրելէ դադրած էին : Բռնեցի այն ձեռքը, որ անշարժ ինկած էր, աւանդ, իմոյս ալ անկէ աւելի ջերմ չէր, տեղէս երերալու զօրութիւն չունէի . բայց զգացի որ տակաւին կենդանի էի . զգացում մը որ կը մոլեգնէ ըզհոգին, երբ կ'իմանանք որ մեր սիրած անձինքը ալ չպիտի կարենանք սիրել : Չեմ գիտեր, ինչո՞ւ ես ալ չկրցայ մեռնիլ, բնաւ աշխարհային յոյս մը չունէի այլ եւս . — բայց հաւատք ունէի, և նա կ'արգելուր ինծի անձնասէր մահ մը :

(Շարունակութիւն)



ԴԵՐՆԵԿԵՐԸ

Ամսոյս սկիզբը Յունաց Միջերկրից Պատրիարքին սպասաւորը Յորդանան գետի մէջ լողալու ժաւանակ խորատոյզ եղաւ, և ներկայ անձանց մէջ հմուտ լուղորդ չը գտնուէր լով, որ աղատեն, խեղդեցաւ իր ցաւ սրտի իւր ծերունազարդ խնամակալին:

— Քաղաքիս մէջ Հրէից ազգէն մանկամարդ կ'ին մի անպարտաւար հագուստը բռնկեցնելով այրեցաւ և աղետալի մահուամբ կ'եքեց իւր կեանքը:

— Ալիլիկից Թեմի և գլխաւորապէս Օէթուռնի ազգայնոց մոտաւորական և բարոյական տխուր վիճակը երկար ժամանակէն ի վեր գրաւած էր Ս. Աթուոյս ուշադրութիւնը: Ամեն ժամանակ, Թէ մասնաւոր գրութիւններ և Թէ ուխտաւորներ, շարունակ օգնութիւն կը պաղատէին իրենց մըտաւոր վիճակի բարւոյրման համար: Այս պիտի առանձին դպրոցներ բանալ նոյն Թեմին մէջ Ս. Աթուոյս ձեռնահասութենէն ի վեր էր, ուստի որոշ

ուեցաւ յատկապէս վարդապետ մի զըկէլ, և նոյն վիճակէն մանուկներ բերել տալ Եսթանգաւորաց Վարժարանի մէջ ուսանելու համար: Այս կայ ամսոյս մէջ ինն մանուկներ արդէն եկան և ընդունուեցան Վարժարանիս մէջ և մի հաստ եւս արդէն որոշուած է և պիտի գայ իւր ուխտաւոր ծնողաց հետ: Այս տասն մանուկները, դպրոցական եօթնամեայ շրջանին մէջ իրենց ուսմանց ընթացքը լրացնելէն զինի, ինքնայոժար կամօք Ս. Աթուոյս մէջ մնացողներէն զատ, ամենքն ևս պիտի վերադառնան իրենց հայրենիքը և ուսուցչութեան պաշտօնի նուիրեն իրենց անձը ի սէր մըտաւոր և բարոյական յառաջագիմուութեան իրենց հայրենակցաց: Բայց սոյն քաղաք յուսոյ երեխայիքը տեսնելու համար տակաւին եօթնամբողջ տարիներ պէտք են, և մինչեւ այն ժամանակ ինչ պիտի լինի արդեօք նոյն բազմակարօտ ազգայնոց տխուր վիճակը: Այն Թէ Ազգային Վարչութիւնը պարտք չունի՞ սոյս կենսական և ամենակարեւոր կէտին վրայ դարձնել իւր ամենախորին ուշադրութիւնը:

ՅԱՆԿ

ՀՈԿՏԵՄԲԵՐ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ. — 'Նջումն. — 'Օդե- նումն. — 'Նբարեխառնումն թիւն .	217
ՍՈՒՐԲ ՏԵՂԵԱՅ ԽՆԴԻՐԸ. — 'Նրկրորդումն Ս. Նախի- բայ խնդրոյն .	223
Ըռ երազայոյդն Ըրշաշա .	230
ԱՌԱԿ. — Ոչխար և այծ .	233
Շիլլենի բանտարկեալը .	235
ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ .	240

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՔ

- Ա. Սիօնը ամէն ամիս կը հրատարակուի 24 երեսէ բաղկացեալ մէկուկէս
ութածալ թղթով :
- Բ. Տարեկան դինն է երկու արծաթ Մէքիսիյէ, հանդերձ ճանապարհի
ծախքովը կանխիկ վճարել :
- Գ. Չատ տետրակ առնել աւելոյդ, պէտք է ամեն մէկ տետրին շորս դա-
հեկան վճարէ :